



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՅՓԻՆ՝ ՅԵՎ ՀՍԽՆ ՊԵՋԸ-ՆՎԻՆՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Ե

Վ. ՅԱԶԻԿՈՎ

№ 7

ՇՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ

«ՊԵՋԸ-ՆՎԻՆՔԻՄ» ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԷ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ
ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ՝**

	<i>Կող.</i>
1. ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆ.—«Սովորիք ռազմական գործը»	25
2. ԼԻՏՈՎՅԵՎ.—«Տեխնիկան պատերազմում»	13
3. ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԲՋԻՋՆԵՐԻՆ ԿԻՏ ՈՂԱ-ՖԻՄԻԱԿԱՆ ՊԱՀՈՒՅՈՒՄԻ խմբակներ (ծրագրեր և կազմակերպչական մերողական խնդիրներ)	10
4. Բամաձևեր ՀԱՅԷ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ Հայաստանյան 2-րդ համագումարի	5
5. ՌՈԶԱՆՈՎ.—«Ինչ և ինչպես պետք է անել մոդելիստների խմբակներում»	10
6. Վ. ՅԵՅՏԼԻՆ.—«Աղավնիները ռազմական ծառայության մեջ»	10
7. Ս. ԲԵԼՈՎ.—«Ինչպես սովորել հրացանով նիշտ կրակել»	10

**ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ՝ ՅԵՐԵՎԱՆ, ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԲԳ**

ՅԱՐՈՒՆԻ ՍԵՐԻԱԿԱՆ ԳԵՂԵՐ-ԵՂԻՐԵՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՐ-ԱՎԻԱԳԻՄԱՐԸ ԽԱՂԱՄ-Ի ԽԱՂԱՎ ԱՇԽԱՏԱՆԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Ե

Վ. ՅԱԶԻԿՈՎ

358.236


№ 7

Շ Ո Ւ Ն Ը

ՌԱԶՄԱԿԱՆ ԺԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՌԱԶՄԱԿԱՆ ԵՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԿՆ ՈՒ
ՄԱՐԶՈՒՄԸ

2-րդ վերահալված լիզ լրացված հրատարակությունից



«ԳԵՂԵՐ-ԵՂԻՐԵՔԻՄ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929

ՀԱՅԹՈՒԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

ՊԱՏՎԵՐ 4917

ԳՐԱՌԵՊՈԳՐԱՎԱՐ 2296 (բ)

ՏԻՐԱԺ 2000

«Մարգեցման հիմքն են կազմում
— գեպի շունը տածած սերը, գործով
շահագործութունը և
գիտականորեն ամուր հիմնավոր-
ված ավյաները»:

Ծների հազարամյա կյանքն ու աշխատանքը կապված ե մարդու կյանքի ու աշխատանքի հետ: Ամենահին ժամանակներից սկսած շունը ոգուտ ե բերում մարդուն: Ծներին բանակի ծառայության համար ոգտագործելը շների ոգտագործության ամենահին ձևերից մեկն ե: Պատերազմում և ընդհանրապես բանակում շունն ոգտագործվում ե չափազանց բազմազան ձևերով: Մեզնից ամեն մեկին ոգտակար կլինի ծանոթանալ ռազմական շների ոգտագործման զանազան ձևերին, ինչպես նաև նրանց պահելու, բազմացնելու և մարզելու հիմնական հարցերին:

Կապի շներն արագությամբ վերականգնում են խախտված կապը և դրանով հաճախ հարյուրավոր մարդկանց կյանք են փրկում: Բեռնակիր շները փամփուշտներ են հասցնում հրաձիգ շղթաներին և դրանով իսկ յերբեմն վճռում կռվի բախտը. պահակային ծառայության շները, վորոնք պահեստներն ու ռազմագերիների ճամբարներն են պահում, բավա-

կանաչափ կրճատում են թիկունքում դրադ-
ված մարդկանց թիվը, դրանով ավելացնելով
ճակատի հզորությունը: Սանիտարական շնե-
րը գիշերը, կռիւից հետո տվյալ վայրը հետա-
խուղելով, հարցուրաւոր կյանք են փրկում՝
առանց գիտակցության ընկած վիրավորներին
դննելով:

Հիշե՛ք, վոր շունը մեր անհատնդիր
բարեկամն ու ոգնականն է:

Ավելի՛ ուշադրություն դեպի այս գործը
և ավելի՛ սեր դեպի շունը: Այս դրժույկը ձեզ
միայն ընդհանուր գաղափարներ է տալիս այդ-
նոր և ոգտակար գործի մասին:

Վ. Ս. ՅԱԶԻԿՈՎ

1927 թ. սեպտ. 1-ին.

Մոսկվա.

ՇԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրագնդի վրա չկա մի այնպիսի անկյուն, վորտեղ չունը մարդուն անհայտ լինի, ամենքն ել ճանաչում են նրան։ Յեվրոպացին, մուգ-բրոնզագույն հնդիկը, սևամորթ նեգրը, եսկիմոսը, չինացին, սամոյեդը, մի իրար քով բոլորը ճանաչում են շանն այն ամենահին ժամանակներից, յերբ ծագում ե առել այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը։

Շանը մենք տեսնում ենք միշտ և ամենուրեք, վորտեղ հաստատվում ե ու ապրում ե մարդը։ Հին կործանված քաղաքների ավերակները պեղելիս շների ու տնային կարասիների կողքին գտնվել են շան գանգեր։ Մեզանից մի քանի հազար տարի առաջ կառուցված հուշարձանների վրա գտնվել ե շան պատկեր, վորի տիպը նման ե յեղել այժմյան դոգին*)։ Մի քանի հին ժողովուրդների համար չունը համարվել ե սրբազան կենդանի։ Ի պատիվ շների, յեգիպտացիները տաճարներ ու քաղաքներ են կառուցել, ի պատիվ նրանց տոներ են կազմակերպվել։ Շունը յերկրի վրա յերևացել ե մոտավորապես մարդու հետ միաժամանակ և յերևացել ե, իհարկե, վոչ մի-

*) Շան մի տեսակը։

անդամից ու այնպես, ինչպես մենք տեսնում ենք նրան այսօր: Այժմյան շունը արդեն գլխատիչ կենդանիներից սերվող բազմաթիվ ցեղերի խառնուրդն է:

Շան յերակներում յերեմն հոսել և գայլի, շնագայլի, աղվեսի արյուն, ուստի և մինչև այսօր ել շան մարմնի կազմվածքը շատ բանով նման է այդ կենդանիների մարմնին. այսպես՝ շունը այդ կենդանիներին նման է իր հասակով, բրդով, գույնով (հատկապես մի քանի տեսակներին), զուգավորման, հղության ժամանակով, և վերջապես, դրա ապացույց պետք է համարել նաև այն հանդամանքը, վոր շունն ու գայլը հաճությամբ են զուգավորվում միմյանց հետ:

Հին ժամանակների մարդուն, վոր ապրում էր մշտական վտանգների մեջ, պետք էր մի ոգնական, իր բնակարանի հավատարիմ ու աներկյուղ պահապան, պետք էր իր հոտի պահապան: Շունը հեշտությամբ էր ընտելանում մարդուն ու կապվում նրա հետ, համարձակ էր ու տոկուն, ուներ նուրբ հոտառություն ու լսողություն և միաժամանակ պահանջկոտ չէր կերակրի ու բնակարանի նկատմամբ: Մարդը շանն ընտելացրեց այնպես, ինչպես վայրի թռչուններին, վայրի այծին, ձիուն և մյուս կենդանիներին: Իհարկե, ընտելացումը յերկար հարյուրամյակներ, գուցե և հազամյակներ է տևել, վորոնց ընթացքում հետզհետե վոչնչացել, անհետացել են վայրենի շան գիշատիչ սովորությունները: Յերբ շունը

ընտելացել է մարդուն, նա այլևս կարիք չի ունեցել բնակարանի ու կերակրի մասին հոգալու, վորովհետև այդ բոլորը նաև սկսել է ստանալ տիրոջից. այս հանգամանքի շնորհիվ ել շունը շատ սերտ է ամուր կերպով կապվել է մարդու հետ, վորը նրան ապրելու հնարավորություն է տվել: Միաժամանակ շատ սովորություններ ու ունակություններ, վորոնք անհրաժեշտ եյին վայրի, ազատ կյանքում, հետզհետե անհետացել են: Դրանց փոխարեն աստիճանաբար ավելի ու ավելի յեն դարգացել շան պահպանական հատկությունները: Իսկ այդ ել հենց պետք էր մարդուն: Այսպես՝ հետզհետե շունը «ընտելացել է», դառնալով մարդու անբաժան ուղեկիցը, նրա հավատարիմ ոգնականը վորության կռվում և նրա բարեկամը:

Հիանալի, սուր լսողությունը, հոտառությունը, պահպանական զգաստությունը, նրա համարձակությունը թշնամու դեմ կռվելիս և, վերջապես, նրա ամուր կապվածությունը տիրոջ հետ,—այս ամենը մարդուն առիթ է տալիս մտածելու, վոր շանը կարելի յե ոգտագործել մի շարք աշխատանքների համար: Այսպես, որինակ, բացի բնակարանը պահպանելուց, շունը սկսում է վորսի ժամանակ հետապնդել զազաններին ու թռչուններին. այստեղ մարդն ոգտվում էր շան այն հին ունակություններից, վոր նա ինքը լայն չափերով ոգտագործում էր, յերբ դեռ վայրենի կենդանի յեր և շարունակ պայքարում էր դոյության համար: Նույն ձևով ել շանն

սկսում են ոգտագործել, վորպէս լծկան, վորի համար կարևոր ե նրա ուժն ու գիմացկունութիւնը: Վերջապէս, շունը դարձաւ նաև մարտիկ և հին ժամանակներում կռւում եր պատերազմներում. այդ ժամանակ ընտելացած շների ամբողջ վոհմակներ նետւում եյին թշնամու հեծելազորի վրա կամ խուժում եյին նրա հետևակազորի շարքերը:

Յերբ շունը բոլորովին ընտանի կենդանի դարձաւ, և յերբ մարդը լիովին ըմբռնեց նրա տված ամբողջ ոգուտը, այն ժամանակ շան մեծ պահանջ առաջ յեկաւ: Սկսվեց շան առեւտուր, և շան գինն այնքան բարձրացաւ, վոր հին գերմանացիները մի լավ շանը յերկու լավ ձի եյին տալիս: Շների բազմաթիւ տեսակներ կան. այժմ շնաբանների կարծիքով կա շների մոտ 400 զանազան տեսակ: Ինչպե՞ս կարող եր այդ տեղի ունենալ:

Այդ տեղի յե ունեցել այն պատճառով, վոր շունը մարդու հետ միասին տարածվել ե ամբողջ աշխարհում, ապա ուրեմն, հարմարվել ե յերկրագնդի զանազան մասերի կյանքի պայմաններին: Ուստի հասկանալի յե, վոր, որինակ, ցուրտ յերկրներում ապրող շունը սկսել ե հետզհետե ծածկվել խիտ բրդով, վորի տակ կա մանր բրդի տաք շերտ. ընդհակառակը, տաք յերկրներում ապրող շան բուրդը կարճ ե: Այդպէս ել փոխվել ե շան գույնը, նայած տեղի բնությանն ու պայմաններին: Այսպէս, որինակ, հյուսիսային շները, վորքոնք մեծ մասամբ իրենց ժամանակն անց են

կացնում ձյունների վրա, բոլորովին սպիտակ մորթ ունեն, անտառային վայրերի շները գորշ, դարչնագույն մորթ ունեն և այլն։ Միաժամանակ այն շները, վորոնք ստիպված են յեղել հողի մեջ—բներում ապրող կենդանիների հետ կռվելու, հետզհետե փոքրացել, կարճահասակ են դարձել, նրանց դուռնչը սրվել, թաթերը յերկարել են, վորպեսզի կարողանան հողը փորել։ Իսկ այն շները, վորոնք ստիպված են կռվելու խոշոր և արագավազ կենդանիների հետ, իրենք դարձել են արագավազ՝ ուժեղ վոտքերով և ուժեղ ու ամուր մարմնով։ Ձյունապատ հարթություններում ապրող շների վոտքերի մատները լայնացել են, վորպեսզի չթաղվեն ձյունի մեջ։ Այս բոլոր առանձնահատկություններն ել հետզհետե առաջացրել են շների նորանոր և միմյանցից տարբերվող տեսակներ։

Ուրիշ խոսքով՝ շունը փոխվել է նայած այն բանին, թե բնությունը, կյանքի պայմանները նրանից ինչ են պահանջել, այնպես, ինչպես զբաղմունքը, արհեստը յերբմն փոխում է մարդուն։ Այսպես՝ պրոֆեսիոնալ ըմբիշը ունի խոշոր մկաններ, լայն կուրծք. հողի տակ՝ հանճահորում աշխատող մարդու աչքերը տեսնում են նաև մթության մեջ. տափաստաններում ապրող մարդը սուր տեսողություն է ունենում, մանկությանից ճիույն անրաժան թափառական ցեղերը ծուռ, կպուկ վոտքեր են ունենում և այլն։

Հետագայում մարդը ինքը սկսեց արհեստ

տական կերպով լավացնել շան տեսակները և իր պահանջների համեմատ նոր տեսակներ առաջ բերել: Այդպիսով՝ ժառանգաբար սերունդից-սերունդ անցնելով, հետզհետե լավացել են շների տեսակները, և փոխվել ե նրանց մարմնի ձևն ու կազմվածքը:

Այնուհետև, վորջան դարդացել և մարդը, այնքան նա նորանոր պահանջներ և առաջադրել շանը: Այսպես, զենքի (վորսի միջոցի) գյուտից հետո, շունը համարյա այլևս կտրիք շուներ կռվելու կենդանիների հետ, սակայն դրա փոխարեն նա պետք և ավելացնել իր ընդունակությունները, վորպեսզի ամելի լավ ձևով հետապնդեր, հալածեր վորսին, բարձրացներ խփված գաղանին կամ թռչուններին և այլն: Այդպիսով, շան աշխատանքը դառնում է շատ բազմազան: Մարդուն ծառայող շունը՝ 1. նրա բնակարանի, հոտի պահապանն է և տիրոջ պաշտպանը (ընտելացման առաջին շրջանը), 2. վորսորդ է, վորը իր սեփական ուժերով կռվում է գաղանների հետ (գլխավորապես հին դարերում), 3. մարդու ոգնականն է վորսի ժամանակ, թռչուններին ու կենդանիներին հետամտողն է և սպանված վորսը բերողը, 4. փոխադրական միջոց է (հեռավոր հյուսիսի ձյունապատ հարթություններում), 5. մարտիկ է ռազմական գործողությունների ժամանակ (հին դարերում, յերբ կռվի տեխնիկան և պատերազմելու միջոցները չափազանց պարզ էյին), 6. հետախուզող է և պահապան է իր բնածին սուր հոտառությամբ ու յսողու-

թյամբ), 7. սուրհանդակ եւ ե պատվիրատար
(հաղորդման ե կապի ծառայություն), 8.
խուզարկու յե (հանցավորների հետքերով վո-
րոնումներ կատարող ե տեղի խուզարկություն
կատարող շներ ե ալլն), 9. սահմանապահ ե
(սահմանի պահպանություն, հատկապես դի-
շերով անցած մաքսանենգների հետքերով վո-
րոնում կատարող շներ), 10. ռազմական սա-
նիտար ե (կռվից հետո տեղի հետախուզու-
թյուն՝ վիրավորներին գտնելու համար, հաս-
կապես դիշերը), 11. պահակ ե (ամեն տեսակ
շներ, իրերի, մարդկանց, ճամբարների,
ռազմագերիների, պահեստների ե ալլ գույքի
պահպանություն) ե ալլն:

Այսպիսով, մարդը չսխալվեց՝ հեռավոր
անցյալում շանը մոտեցնելով իրեն, — նա շնից
ավելի շատ բան ստացավ, քան ինքը նրան
տվեց: Շունը սակավապետ եւ դերժ շահա-
խնդրությունից, ե վորքան ել մարդը ավելի
ու ավելի պահանջներ ե առաջադրել շանը,
վորքան ել փոխվել ե շան տեսակը, — միշտ ե
անպայման մարդը նրանից միայն ոգուտ ե
ստացել:

ԻՆՉՊԵՍ ԵՈՒՆՆ ՈԳՏԱԳՈՐԾՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Յերբ մարդը տեսավ, վոր շունը լավ պա-
հապան ու պաշտպան ե, շատ շուտով նրա մեջ
միտք հղացավ շանը ոգտագործել ռազմական

ծառայության համար: Հին բերդերում, վո-
րոնց դռները գիշերը փակվում եյին, շներին
հանում և թողնում եյին դարպասներից դուրս,
քաղաքի պարիսպների մյուս կողմում, և նը-
րանք ամբողջ գիշերն անց եյին կացնում փոսի
մոտ: Իրենց բնածին ընդունակություններով
լավ և զգաստ պահապաններ լինելով՝ այդ
շները նկատում եյին ամենափոքր ձայնն ու
աղմուկը և թշնամու կողմից ամենափոքր շար-
ժում լինելու դեպքում բարձր հաջոց եյին
բարձրացնում, դրանով ստիպելով պահապան-
ներին առանձնապես ուշադիր և զգաստ
լինելու:

Նկախ ունենալով շան մի քանի տեսակների
զգալի ուժը, դիմացկունությունը, հասակն ու
զայրացկոտությունը, մարդը մտածեց շանը
ոգտագործել նաև վորպես մարտիկ, վորպես
կովոդ ուժ: Այստեղ շունն ոգտագործվել և
զանազան նպատակների համար. յերբեմն շնե-
րը կռվում եյին մարտիկների հետ հավասա-
րապես, նրանց հետ կողք-կողքի, յերբեմն—
ինքնուրույն կերպով: Հաճախ գիշերը քաղաքի
պաշարման ժամանակ անակնկալ կերպով
բացվում եյին քաղաքի դարպասները, և 400-
500 կատաղի, գազազած մեծ շներ բաց եյին
թողնվում հակառակորդի վրա, խուժում եյին
նրա շարքերը և խուճապ եյին առաջ բերում,
ոգտվելով գիշերվա մթությունից: Յեղիպտոս-
ում կատարված պեղումների ժամանակ գտո-
նվել են քարեր, վորոնց վրա նկարված են յե-
ղել սև նուբիական նետածիգ-աղեղնավորներ

ռազմական շների հետ միասին: Միջին դարերում դոմակներն ու արանսպարտներն ուղեկցում էին ռազմական շները, փորանց հաղցնում էին սուր փշերով ծածկված զրահներ, փորակալի թշնամու հեծելազորի կողմից գոմակի վրա հարձակում դործելու դեպքում շները վախեցնեն ձիերին:

Հետագայում, յերբ կատարելագործվեց պատերազմի տեխնիկան, և զորքը ղեկից հրադնով, փոխվեցին նաև շանը ռազմական առարկիդում ոգտագործելու յեղանակները: Թշնամու հետ բաց կռիվ մղելն արդեն դժվար էր միայն ատամներով զինված շան համար. սակայն դրա փոխարեն շանը սկսեցին ոգտագործել հետախուզական աշխատանքների համար: Միաժամանակ, նկատի ունենալով շան գլմացկունությունն ու արագաչարժությունը, մարդիկ մտածեցին նրան ոգտագործել հաղորդման կապի համար: Շների այդ աշխատանքի առաջին փորձը կատարվեց Հնդկաստանում, յերբ հեռագրաթելերը փչանալու պատճառով հեռագիրը տանում էին հատուկ ձևով մարդված շները՝ 10 րոպեյում անցնելով 6 մղոն:

Սեյաստոպոլի պաշարման ժամանակ (1855-56 թ. թ.) և Բալկանյան պատերազմում (1877-78 թ. թ.) ռազմական շները պահպանական ծառայություն էին կատարում թե մեր և թե թշնամու բանակում:

Ռազմական շների մարդումը (վարժեցումը) այդ ժամանակ դլխավորապես մի նպատ-

տակ ունեւր—շներին ոգտագործել պահպանա-
կան ծառայութեան համար: Այդ մարդումը
հիմնված չեր դիտական տվյալների վրա,
ուստի և պատահական բնույթ եր կրում և
պետական գործ չեր: Սովորաբար շներին
պահում և մարդում եյին վորսկան (охотный)
խմբերին կից, ինչպես այն ժամանակ կոչվում
եյին հետախուզող խմբերը. շներին այդ խմբե-
րում մարդում եյին մարդիչ-գինվորները՝ ով
ինչպես կարող եր. չնայած դրան, այնուամե-
նայնիվ հաջողութեւններ ունենում եյին:
1892 թ. Սամուրի գնդում արդեն մոտ 30
մարդված ռազմական շուն կար, վորոնք բեռ-
նատարական և կապի աշխատանք եյին կատա-
րում: 1912 թ. առաջին անգամ Ռուսաստա-
նում ռազմական շների պահակային բուծարան
հիմնվեց Իզմայլովյան գվարդիական գնդին
կից: Ամենապետքականը համարվում եյին
«երդել-տերյեր» տեսակի շները, վորպես ա-
ռավել դիմացկուն և բանակում ծառայելու
համար պիտանի շներ: Համարյա այդ նույն
ժամանակ այդ շներից 20 հատ պահվում եյին
Ֆարսկոսելյան հուսարական գնդում. այստեղ
առաջին անգամ շներին ոգտագործեցին կապի
և հետախուզութեան համար հեծելազորի գոր-
ծում: Յեգերյան գնդում այդ շների վերաբեր-
մամբ կատարված հաջող փորձերից հետո
բացվեցին ռազմական շների մարդիչների (ու-
սուցիչների) առաջին դասընթացները: Այդ
միևնույն ժամանակ ծովային գերատեսչու-
թեւնը սկսեց փորձեք անել շներին ծո-

վաճիչա կառուցվածքների պահպանության և
կապի համար ոգտագործելու ուղղությամբ։

Իմպերիալիստական պատերազմն սկսվե-
լուց հետո քրեական-հետախուզական ջնքերի
բուժարանները արագությամբ մեծ թվով ջնք
մարդեցին սանիտարական և պահպանական
ծառայության համար, վորից հետո մոտ 300
չուն ուղարկվեց ճակատ, գլխավորապես կար-
պատները։ Այդ ջնքը ճակատում շատ հաջող
աշխատանք կատարեցին։

Ռազմական ջնքի ոգտագործումը Ռու-
սաստանից ավելի լավ կազմակերպված եր
Գերմանիայում, վորտեղ ռազմական ջնքի
վերաբերյալ փորձերը սկսվել էին 1884 թը-
վից, և ջնքը մարզվում էին պահպանական,
հետախուզական, սանիտարական և կապի ծա-
ռայության համար։ 1886 թ. գերմանական
դաշտային կանոնագրքում արդեն ասված եր,
թե յերբ և ինչպես կարելի յե ոգտագործել
ռազմական ջնքին։ Համաշխարհային պատե-
րազմի ժամանակ գերմանական ջնքը հաճախ
խանգարում էին ռուսական հետախույզների
աշխատանքը։ Գերմանիայում մեծ թվով ջնք
ծառայում էին նաև ռազմագերիների հավա-
քատեղիներում, վորպես պահակներ։

Գերմանիայում կազմակերպված «ջնքի
բանակը», վորի մեջ 12,000 ռազմական չուն
կար, զգալի չափով ուժեղացրեց գերմանական
զորամասերի պահպանությունը, խիստ պա-
կասեցրեց պահակային ծառայությամբ զբաղ-
ված մարդկանց թիվը, շատ վիրավորների

կյանք փրկեց սանիտարական ծառայութեամբ
և իր բնական ընդունակություններով հեշ-
տացրեց դժվարին հետախուզությունը: Պա-
տերազմից հետո Վերսալի դաշնագրի համա-
ձայն Գերմանիան պետք է հաղթողներին
հաճներ իր ռազմական շների կազմի մօտ 75
տոկոսը: Վերսալի դաշնագրի այս կետը հա-
տատում է, թե վորքան լուրջ և կարևոր նշա-
նակություն ունի ռազմական շների բազմա-
ցումն և ոգտագործությունը:

ԻՆՉՊԵՍ Ե ԾՈՒՆՆ ԱԾԽԱՏՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ


Ինչպե՞ս և յե՞րբ կարելի յի ոգտագործել
չան աշխատանքը: Ավելի հեշտ բան չկա, քան
չմտածված հրաման տալը. շներին ոգտագոր-
ծելիս այդ ավելի հաճախ կարող ես պատահել,
քան ուրիշ վորևէ դեպքում: Մարդեցման տ-
ռանձնահատկություններին քիչ ծանոթ և չան
խելքն ու ընդունակությունները վատ ճանա-
չող մարդը հաճախ կարող ես չանը նրա ընդու-
նակություններից ու ուժերից վեր աշխատանք
տալ:

Այսպես, որինակ, սխալ ես կապի ծառա-
յություն կատարող շներից պահանջել, վոր-
պեսզի նրանք կապ պահպանեն 15-20 կիլոմ.
տարածութեան վրա. այդ միանշանակա՞յն ավե-
լորդ ես: Այդքան մեծ տարածութեան վրա հա-

10622
 Aug 13

ջողությամբ կարելի յե աշխատել սուրհան-
 դակներին, ձիավորներին, հեռագրի և կապի այլ
 միջոցներին ոգնությամբ: Ընդհակառակը, կը-
 րակի առաջավոր գծի և մոտակա շտաբի մի-
 ջև, փոքր զորական միավորների, որ. վաշտի
 և գումարտակի հարեան զորամասերի միջև,
 ընդհանրապես կրակի առաջավոր գծից 1-1½
 կիլ. տարածության վրա կապ պահպանելը
 միանգամայն համապատասխանում է շան ու-
 ժերին, և շունը հենց այդպիսի աշխատանքի
 համար ել պետք է: Բայց վայրում, փոքր տա-
 րածության վրա, յերբ մարդ ուղարկելը վը-
 տանգավոր է, յերբ հեռախոսաթելը կտրվում
 է թշնամու կրակից, իսկ կրակի տակ կապե-
 լը դժվար է,—շունը կարող է կապ պահպա-
 նել, և այդ ժամանակ պետք է ուղարկել նրան:
 Նա արագաշարժ է, ճկուն ու խուսափող, ա-
 վելի քիչ վախ է գգում, իսկ վոր գլխավորն է՝
 թշնամուն ավելի քիչ նկատելի յե, քան մար-
 դը: Նմանապես, աննպատակ է շանը ոգտա-
 գործել ցերեկը վիրավորները գտնելու համար
 այնտեղ, վորտեղ վիրավորներին հեշտու-
 թյամբ գտնել և ժողովել կարող է նաև մարդը:
 Սակայն այնտեղ, վորտեղ վայրը անտառային
 է, այսինքն՝ այնտեղ, վորտեղ վիրավորնե-
 րին կարելի յե ճնկատել, այնտեղ պետք է ու-
 ղարկել շանը, վորովհետև նա իր սուր հոտա-
 ությամբ և լսողությամբ վիրավորին ավե-
 լի շուտ կգտնի, քան սանիտարը:

Այսպիսով, շան ոգտակար աշխատանքը
 կռվի այժմյան պայմաններում կարող է շատ



բազմազան լինել, սակայն չի կարելի շանը առանց այլևայլության ամեն բանի համար ողտագործել:

Ռազմական շունը կարող է կատարել՝
1. պահպանական ծառայություն, 2. հետախուզություն, 3. հաղորդման ծառայություն, 4. բեռնատարություն ու լծկանություն, 5. ռազմա-սանիտարական ծառայություն, 6. պահակային ծառայություն և այլն և 7. ուղեկցորդային ծառայություն:

Սակայն ավելի հեշտ է շանը սովորեցնել այն աշխատանքին, վորին նա ավելի ընդունակ և սովոր է:

Իր բնական հակումներով շները ամենից ավելի պահապաններ են, և այդ հատկությունը պահպանել են նաև ընտելացած, այսինքն՝ տան շները: Ուստի շունը պահակային ծառայության վարժեցնելու համար պետք է միայն հղկել ու զարգացնել այդ ընդունակությունները:

Ավելի դժվար է շանը սանիտարական ծառայության, կուպի ծառայության, բեռներ ու ծանրություններ կրելու սովորեցնելը, վորովհետև շունը այդպիսի բնական հակումներ չունի, վայրենի և քիչ ընտելացած շունը այդպիսի աշխատանքի ծանոթ չի յեղել:

Ռազմական շների աշխատանքը կարող է բաժանվել յերկու առանձին խմբերի, վորոնցից յուրաքանչյուրը առանձին մարզում և պահանջում:

I. Խումբ.

- 1) Պահպանական ծառայութիւն:
- 2) Հետախուզական ծառայութիւն.
- 3) Պահակային ծառայութիւն.
- 4) Ուղեկցութեան ծառայութիւն.

II. Խումբ.

- 1) Կապի ծառայութիւն.
- 2) Բեռնատարական ծառայութիւն և թիկանութիւն.
- 3) Ռազմա-սանիտարական ծառայութիւն:

Այս բաժանումը պատահական չէ և շնորհին մարդերու յեղանակներէից չէ միայն կախված: Յետեւ մենք ուշադրութեամբ քննենք այդ տարբերութիւնները, ապա կտեսնենք, վոր II խմբի շնորհ պետք ե բարեհաճ կամ ծայրահեղ դեպքում հանդիստ լինեն դեպի ոտար մարդիկ: Իսկ I խմբի շնորհ, ընդհանրապէս, պահանջում ե անբարեհաճութիւն և չարութիւն դեպի յերեան հանված, նկատվոժ ոտար մարդը: Անվորժ մարդիկ շնորհ հաճախ միեւնոյն շանը սովորեցնում են թե ուղեմասանիտարական և թե հետախուզական ծառայութեան համար: Թվում ե, թե աշխատանքի այդ յերկու տեսակները նման են միմյանց, վորովհետեւ յերկու դեպքում ել շունը տվյալ վայրի հետախուզութիւն ե կատարում և վորեւեւ բան գտնելու դեպքում իմաց ե տալիս տիրոջը, սակայն այդպիսի ուսուցումից վոչ մի լավ հետեանք չի ստացվել և չի յել կարող

ստացվել: Այդպիսի ուսուցումը բոլորովին անթույլատրելի յե, վորովհետև առաջին դեպքում շունը սովորում ե բարեհաճ կերպով և վստահությամբ վերաբերվել իր գտած մարդուն: Վիրավոր դռնելիս նա պետք ե մոտենա նրան, վորպեսզի վիրավորը կարողանա զգտվել նրա սանիտարական պայուսակից, (յեթե կարող ե), իսկ հետո արդեն վերադառնալ և գտած մարդու մասին հայտնել սանիտարին (պայմանական նշանով): Յերկրորդ դեպքում, այսինքն՝ հետախուզության դեպքում շունը պետք ե անբարեհաճ կերպով և անվստահությամբ վերաբերվի դեպի հանդիպած կամ գտած մարդը և վոչ մի դեպքում չպետք ե մոտենա նրան:

Այս տարբեր աշխատանքները միևնույն շանը տալով, իհարկե, չի կարելի սպասել, վոր նա կըմբռնի աշխատանքի այն տարբերությունը, վորը հեշտությամբ կարող ե հասկանալ մարդը: Նա կշփոթվի, իրեն կկորցնի, և կիչացնի ամբողջ գործը, վորովհետև կարող ե վիրավորից փախչել կամ, ընդհակառակը, բարեկամարար մոտենալ հակառակորդի հետախույզին:

Ահա այդ պատճառով ել յերբեք չի կարելի միևնույն շանը մարդել յերկու խումբ ծառայությունների համար, և մարդիչը պետք ե ծառայությունների այդ բաժանումն ու տարբեր խմբերը լավ հիշի:



ՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՎ ԴԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՂՈՒՄ

Յերկար ճանապարհ անցնելուց հետո կամ կռվից հետո մարտիկի որդանիզմը ընդհանրապես հոգնածությունն է զգում. մարդու տեսողությունն ու լսողությունը վորոշ չափով բթանում են: Այս հոգնածությունը հատկապես ուժեղանում է վորոշ վայրում տեղավորվելուց հետո, այսինքն՝ հենց այն ժամանակ, յերբ պահանջվում է առանձնապես աշխուրջ լինել: Այսպիսի դեպքերում, յերբ մարդիկ հոգնած են լինում, շները իրենց սուր հոտառությամբ ու լսողությամբ չափազանց շատ պիտանի յեն պահպանական աշխատանք կատարելու համար, վորովհետև ավելի յեն ապահովում զորամասի հանգիստը: Համաշխարհային պատերազմում գերմանացիները իրենց դաշտային պահակներում ունեյին ռազմական շներ, վորոնք հեշտությամբ նկատում եյին մեր հետախույզների շարժումը: Այս ասպարիզում շների գլխավոր աշխատանքը՝ գիշերային պահպանությունը և խիստ կտրատված վայրերի պահպանությունն է: Շունը պետք է յերևան հանի թշնամու հետախույզներին և առհասարակ թշնամուն՝ շնորհիվ իր սուր զգայարանների, և այդ մասին տեղեկություն տա դաշտային պահակին: Գիշերը շան լսողությունն ու հոտառությունը ավելի յեն ուժեղանում, և այդ նրան հանձնված աշխա-

տանքի հաջողութեան ամենահաստատու դրա-
վականն է: Պահպանական ծառայութիւնն կա-
տարելիս շունը պետք է վորքան կարելի յե՝
մոտ գտնվի դիտակալին և մի տեսակ՝ նրա
տեսողութիւնն ու լսողութիւնն ուժեղացնող
հանդիսանա:



Շունն ոգնում է ժամապահին

Իհարկե, սրան պետք է ավելացնել նաև
այն, վոր իր կողքին այդպիսի հավատարիմ և
ոգտակալ պահակ ունենալով, ժամապահը ի-

րեն ավելի խրոխտ ու արի յե գգում: Սակայն, վորպեսզի չունը իր պահպանական ծառայութեամբ ոգուտ տա, նա պետք է դիտակալի հետ, նրա կողքին լինի, այսինքն՝ կատարի մերձավոր պահպանություն: Այժմ, ճիշտ է, փորձեր են կատարվում շանը նաև հեռավոր պահպանութեան համար ոգտագործելու ուղղութեամբ, յերբ չունը դիտակալից 150-200 քայլ առաջ է կանգնում, սակայն դժվար է առել, թե այդ փորձերը վորքան հաջողութեամբ կունենան: Վտանգը մոտենալիս չունը ամենից առաջ լարում է ուշադրութեամբ, հավաքում է իրեն, սրում է ականջները և այլն, յերբ չունը այդ բոլորն անում է, ապա այդ նշան է, վոր վտանգը մոտ է:

Շանը այդպիսի ծառայութեան սովորեցնելու համար պետք է վարժեցնել ու հղկել, նրա ցնել շան պահպանական հակումները: Այդ հղկումը կատարվում է հետևյալ յերեք կանոնների համաձայն՝

1) Պետք է զարգացնել շան տակունությունը, ուշադրությունը և ընդհանրապես լսելու (յեմքարկվելու) ունակությունը.

2) Պետք է ընտելացնել արձակյունների ձայնին.

3) Պետք է զարգացնել շան պահպանական հակումները:

Շան պահպանական հակումները զարգացնելու և ուժեղացնելու համար դիմում են ավելի խիստ և ուժեղ կերպով գրգռող ու ազդող

միջոցներով. օրինակ՝ ներկայացնում են կարծեցյալ թշնամու աշխատանքը, վորի ընթացքում ուժեղ աղմուկ ու խռոց են առաջացնում, հետզհետե այդ աղմուկը մեղմացնում են, վորի շնորհիվ շունը հետո արդեն սկսում է գրգռվել նաև ամենափոքր, հազիվ լսելի ձայնից, ուշադրությամբ սպասում է, հետեւապես և սկսում է տռանձնապես լարված ուշադրությամբ լսել:

4) Պետք է խլացնել շան հաջոցը, վորը վնասում է պահպանության գործին, քանի վոր յերևան է հանում պահակի, ժամապահի գտնված տեղը և այլն: Շունը միշտ հաջում է, յերբ գրգռված է. հաջոցը խլացնելու համար մի քանի յեղանակներ կան, սկսած ծայրահեղ դեպքում ձայնալարերը կտրելուց մինչև հաջալու հնարավորությունից զրկող հատուկ ձևվի բեռնակապ գործադրելը:

5) Պետք է ուժեղացնել և վերամշակել շան պահպանական աշխատանքը ըստ ժամանակի և տեղի տարբեր պայմանների: Թշնամու մասին իմաց տալը կատարվում է նրանով, վոր ամենաթույլ ձայնն անգամ լսելիս շունը լարում է իր ուշադրությունը, այդ բանը կարելի յե նրկատել շան ամբողջ մարմնի ընդհանուր լարվածությունից, նրա դլխի ուղղության փոփոխություններից, ականջների լարվածությունից և առաջ նետվելու դիրքից: Ավելի նպատակահարմար է շանը կապած պահել, կապը ամրացնելով դիտակալի գոտուց. այս դեպք

քում շունը կապը ձգելով՝ ազդանշան է տալիս դիտակալին: Շանն այս ձևերին վարժեցնելուց առաջ շան մեջ զարգացնում են ընդհանուր անվստահություն դեպի ոտարները և չարություն, վրրը և ուժեղացնում է շան պահպանական հակումները: Սկզբում ուսուցումը կատարվում է ցերեկը, յերբ կարծեցյալ թշնամու մոտ մոտենալուց շունը տեսնում է նրա շարժումը և լսում է նրա աղմուկը (մի փոքր չափազանցված): Այնուհետև կամաց-կամաց աշխատանքն սկսում են կատարել մթնով, և պարզ կերպով նշմարելի թշնամու փոխարեն լսվում է միայն նրա բարձրացրած թույլ աղմուկը: Վերջապես, գիշերն աշխատելիս աղմուկն ու խշոցը աստիճանաբար պակասում ու թուլանում են և դառնում հազիվ լսելի: Բացի դրանից, գոյություն ունի նաև ուսուցման ել ավելի բարդ յեղանակ, — այդ բրինկելի գործածությունն է, յերբ վտանգի դեպքում շունը բռնում և ձգտում է դիտակալի գոտուց կախված կոճղիկը. այս ձևով միաժամանակ թե ազդանշան է տրվում և թե շան հաջոցը չի դուրս գալիս (շան յերախի կոճղիկը արգելում է հաջալ):

ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Յերթի ժամանակ պահպանության ծառայություն կատարելիս առաջավոր դեպքերի աշխատանքն առանձնապես ծանր է, վորովհետեւ նրանք թե պահպանական և թե հետախուզական դեր են կատարում:

Այդ դեպքերի համար ռազմական շնորհ
հատկապես կարևոր են մանեյրային (չարժա-
կան) պատերազմի ժամանակ, յերբ հակառա-
կորդին կարելի չե սպասել ամեն կողմից:

Շնորհին հաջող կերպով այդպիսի պահպա-
նության համար ոգտագործելու նպատակով
անհրաժեշտ ե վարժություններով շարունակ
արթուն պահել շան պահպանական հակումնե-
րը, զբաղվելով նրա հետ տարբեր վայրերում
և որվա տարբեր ժամանակներում:

Հետախուզությունը պետք ե լինի աչա-
լուրջ, գործնական և գաղտնի, ուստի և մար-
դու բոլոր զգայարանների և աճբողջ ջղային
համակարգության լարում ե պահանջում: Այս
պայմաններում շան ներկայությունը և ոժան-
դակությունը, հետախուզությունը դարձնում
ե ավելի աչալուրջ և ավելի գործնական ու
արդյունավետ:

Ըստ եյության ռազմական շան համար հե-
տախուզությունը նույնն ե, ինչ վոր պահպա-
նությունը, միայն այն տարբերությամբ, վոր
շունը չի կանգնում, այլ գնում ե հետախույզի
հետ, վորոնումները կատարելով հոտառու-
թյամբ, տեսողությամբ և լսողությամբ և մի
տեսակ՝ դիտակալի զգայարաններն ուժեղաց-
նող հանդիսանալով. շնորհիվ այս հանգա-
մանքի դիտակալը շան շարժումներից, տրա-
մադրությունից, գլխի և ականջների ուղղու-
թյունից իմանում ե, վոր մարդ կա:



Շունը հետախույզի հետ․

Այսպիսի աշխատանք կատարելիս, ինչպես նաև պահպանության ժամանակ, շան լզին պետք է կապ լինի՝ ծայրը դիտակալի ձեռքին, կամ շունը պետք է ընդհանրապես մոտ լինի նրան։

ՀԱՂՈՐԴՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝


Ամենքն ել դիտեն, թե ինչ նշանակություն ունի կապը կռվի ժամանակ. կապի աշխատանքից է կախված զորամասերի թե ղե-

կապարությունը և թե փոխադարձ աջակցությունը:

Վորքան խորանում և թիկունքը, այնքան ավելի կապն ամրանում է, վորովհետև թիկունքի հանգիստ պայմաններում աշխատելը ավելի հեշտ է: Վորքան ավելի մոտ է կրակի առաջավոր դիծը, այնքան կապն անհուսալի յե, այնքան ավելի հնարավորություն չի լինում աշխատելու: Ուստի հասկանալի յե, վոր արագությամբ $1-1\frac{1}{2}$ կիլոմետր տարածություն անցնող և քիչ նկատելի շունը կապի լավագույն միջոցներից մեկն է, վոր կարիք յեղած դեպքում կարող է փոխարինել մնացած բոլոր յեղանակները: Հատկապես, հենց այստեղ, առաջավոր դժում, զորական մանր միավորներում է նա անհրաժեշտ, քանի վոր խոր թիկունքի հետ կապ պահպանելու համար նա բոլորովին անպետք է: Կարելի յե կանոն համարել այն հանգամանքը, վոր շունը, վորպես հաղորդման միջոց, պետք է աշխատի վաշտի և հազվադեպ դեպքերում՝ գումարտակի մասշտաբով, և նրա աշխատանքի սահմանները $1-1\frac{1}{2}$ կիլոմետր շրջանակից չպետք է դուրս գան: Հենց այսպիսի փոքր տարածության վրա կատարվող աշխատանքի համար ել ոգտակար է շունը:

Հաղորդման աշխատանքների համար շան լավ կողմերն են՝ 1) հաղորդման արագությունը (2 րոպեյում 1 կիլոմետր), 2) վայրից կախված չլինելը (շունը ամեն տեսակ վայրերով անցնում է), 3) քիչ խոցելիությունը կը-

բակից, վերովհետև նա քիչ նկատելի յե: 1925 թ. զորաչարժերի ժամանակ յերկու գերմանական դամփուներ և մեկ դորբերման-պինչեր $1\frac{1}{2}$ ժամ կապ եյին պահպանում հարձակվող վաշտի վաշտապետի և դասակապետների միջև, անընդհատ կրակի տակ: Այդ աշխատանքի ժամանակ 500-700 քայլ տարածությունը շներն անցնում եյին 45-55 վայրկյանում, այսինքն՝ միջին հաշվով $1-1\frac{1}{2}$ րոպեյում 1 կիլոմետր:



Դորբերման-պինչեր

Մի ուրիշ դեպքում, յերբ գումարտակը պաշտպանում եր Մոսկվա գետի անցարանները (переправы) բոլորովին բաց վայրում (մարդադետին), վաշտերի հետ կապ պահպանելու

համար գումարտակի շտաբի տրամադրութեան տակ դրված շները 3 ժամ տևող պաշտպանական գործողութիւնների ժամանակ կապի ծառայութիւն եյին կատարում գումարտակի տեղամասում: Շներից մեկը կապ եր պահպանում յերկու վաշտի հետ (հրաձիգ և զնդացրային) մոտ յերեք վերստի վրա. այս տարածութիւնը շունն անցնում եր 5 ր. 30 վարկյանում:

Յերկու ժամվա ընթացքում շունը այդ տարածութիւնը անցել ե (զնալ ու գալը) չորս անգամ, այսինքն՝ կտրել ե ընդամենը 24 վերստ, սակայն ամենեկին չի հոգնել և պատրաստ ե յեղել դարձյալ աշխատելու:

Գումարտակի մյուս հրաձգային վաշտի և նրա շտաբի հետ պաշտպանութեան ժամանակ մեծ հաջողութեամբ կապ եր պահպանում յերկրորդ շունը, իսկ յերրորդը կապ եր պահպանում գումարտակի շտաբի և նրա թիկունքի միջև:

Այս որինակները ցույց են տալիս, վոր ճիշտ ե ռազմական շներին մանր զորական միավորներում (դասակ, վաշտ և գումարտակ) ոգտադործելու սխտեմը: Սակայն շանը հաղորդման ծառայութեան վարժեցնելը—ամենադժվար աշխատանքներից մեկն ե, վորովհետև այդպիսի աշխատանք կատարելիս շունը կտրվում, անջատվում ե իր տիրոջից, այսինքն՝ մարզիչից, վորին սովոր ե և վորին ամենից ավելի յե հասկանում, այլև այն պատճառով, վոր շան համար դժվար ե վորոշել

չարժման ուղղությունը: Այստեղ հաջող արդյունքներ են ստացվում միայն այն ժամանակ, յերբ ամենորյա յերկար վարժություններից հետո անցումը (провер) նրա համար «սովորություն է» դառնում, այսինքն՝ յերբ շունը վարժվում է աշխատելու մարտական գործողությունների պարադաներում (թեկուզ արհեստական ձևով ստեղծված):

Ուսուցման սկզբում անցման տարածությունը սկսվում է 20-30 մետրից և աստիճանաբար ավելացվում է: Այստեղ մարզիչը վարժություններն այնպես պետք է կատարի, վորպեսզի տարածությունն ավելանալու հետ անցման արագությունը չպակասի: Բացի դրանից, փորձված մարզիչը շարունակ պետք է աշխատի, վորպեսզի շունը ինքը հետաքրքրվի աշխատանքով: Վորպեսզի շան հետաքրքրությունը չպակասի, տուն գալուց հետո շունը պետք է վորևէ բան «նվեր» ստանա: Այս նվերն էլ հենց ուսուցման սկզբնական շրջանում շան մեջ «հետաքրքրություն» առաջ կբերի դեպի անցման վարժությունները:

Հրաձգությունը և այն ամենը, ինչ վոր կարող է անցման ժամանակ շան ուշադրությունը գրավել, պետք է կիրարկել հետո, այն ժամանակ, յերբ շունն արդեն հաստատ կիմանա՝ թե նրանից ինչ է պահանջվում: Բացի դրանից, ուշադրությունը գրավող այդ բոլոր հանգամանքները պետք է կիրարկել աստիճանաբար, վորպեսզի շունը չչփոթվի, չխառնի իր անելիքները: Միաժամանակ ուսուցման ըն-

Թացքում պետք է անցման ուղղութիւնները հաճախակի փոխել: Ուսուցման առաջին որերին մարդիչի ոգնականը վերցնելով շանը, հեռանում է 20-30 քայլ, թողնելով տիրոջը հետևում. այդքան հեռանալուց հետո, ոգնականը յերեսը դարձնում է տիրոջ կողմը, շան վզից հանում է կապը և հրամանն է տալիս՝ «դեպի պո'ստ»: Շունը տիրոջը սեռնելով, հասկանալի յե, վազում է դեպի նա, և այստեղ բավարարութիւնն է ստանում (փաղաքշանք, ուտելիք). դրանից հետո մարդիչը շանն ուղարկում է ոգնականի մոտ, տալով նույն հրամանը «դեպի պո'ստ»: Յեթե շունը չի հասկանում, թե նրանից ինչ է պահանջվում, ոգնականը նրան իր մոտ է կանչում. նշան անելով և հրաման տալով՝ «ինձ մոտ», իսկ մարդիչը կրկնում է, շանն առաջ հրելով: Կարճ տարածութիւնի վրա և տեսանելի պոստերում շունը շատ արագ կերպով է սովորում աշխատել: Գործը դժվարանում է, յերբ ավելանում է անցման տարածութիւնը, վորովհետև տարածութիւնն ավելանալուց շան հետաքրքրութիւնը կորչում է: Ուստի անցման տարածութիւնը պետք է ավելացնել մեծ գզուշությամբ, շանը հետզհետե վարժեցնելով դրան:

Տարածութիւնն անցած շանը չպետք է իսկույն հետ ուղարկել, այլ պետք է հետդահետե, աստիճանաբար պակասեցնել առաքման ընդմիջումների տևողութիւնը: Բացի դրանից, պետք է շանը միանգամից վարժեցնել

աշխատանքի այնպիսի պարագաների, վորոնք նման են իսկական հացության: Այս նպատակով շան պայուսակի մեջ տոմս են դնում, վորը հանում են, յերբ շունը պոստ և հասնում և այլն: Այս վարժությունն այնպես պետք է կատարել, վորպեսզի այդ շարժումներն ու գործողությունները շունը տեսնի. այդ ժամանակ շունը սկսում է հասկալ անցման իմաստը:

Շանը կապի աշխատանքներին վարժեցնելու ամենավստահելի միջոցներից մեկը «ուժեղացման» յեղանակն է, յերբ շանը սովորեցնում են սուր հոտ արձակող հետքերով: Մեկ կամ մի քանի պոստերի հետ կապ հաստատելու համար մարզիչի ոգնականը հատուկ ապարատ է կրում, վորից յուրաքանչյուր քայլում պետին է ընկնում սուր հոտ արձակող վորևե հեղուկի մի կաթիլ, և այդ ապարատը հետն առած՝ մի պոստից մյուս պոստն է անցնում: Գետնին ստացվում է հոտ արձակող մի ամբողջ գիծ, վորը կապում է միմյանց հետ բոլոր պոստերը: Այդ հեղուկը դետնի վրա իր հոտը պահում է 24 ժամ և ավելի, ուստի և հոտի ոգնությամբ ամեն բոպե կարող է գնալ մինչև անտեսանելի ամեն մի պոստ:

ԲԵՌՆԱՏԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՑԵԿ

ԼՄԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կովի ժամանակ ուժեղ կրակի տակ դիրքերը փամփուլոններ տանելը մարդկանց համար միշտ դժվար է, իսկ հաճախ՝ ուղղակի

անհնարին: Այստեղ ևս շունն ուզնում և մարդուն, յեթե նա վարժված և բեռնատարական աշխատանքի: Այդպիսի շունը պետք է շատ լավ ծանոթ լինի կապի (հաղորդման) ծառայությանը և մեծ հասակ, ուժ և դիմացկանություն ունենա:

Միջին ուժ և հասակ ունեցող շունը կարող է միանգամից մինչև 200 փամփուլատ տանել: Մի զույգ շունը հեշտությամբ քաշում է «Մաքսիմ» զնդացիքը հավաքած (սարքի), կրակելու պատրաստ վիճակում, կամ ամառը հատուկ սայլակ են տանում, իսկ ձմեռը հատուկ սահնակ՝ փամփուլատներ կամ զնդացքի ժապավեն բարձած, 4—5 փութ ծանրությամբ:

Սակայն այդ ձևով մարտամթերքներ կրելը հնարավոր է միայն վորոշ դեպքերում, նայած կռվի պայմաններին և գլխավորապես վայրին: Գնդացիք կամ փամփուլատներ կրելը հնարավոր չի լինում, յեթե վայրը խիստ կրտրտված է (անտառ, ձոր, գետ) կամ ճահճային է: այս դեպքում շներին պետք է բարձել և ապա ուղարկել: Բեռան մեջ բիջ փամփուլատ կարելի չի տեղափորել, սակայն դրա փոխարեն շունն ավելի արագ կգնա և հնարավորություն կունենա կարճ ժամանակում մի քանի անգամ գնալու և վերադառնալու: Լեռնային վայրերում, վորտեղ բարձրության պատճառով ճանապարհը դժվարանում և հաճախ անհնարին է դառնում մարդու համար, բեռնակիր շան ծառայությունն անփոխարինելի չէ:

Թացի գնդացիքների համար փամփուշտներ ու ջուր տանելուց, շունը կարող է փոխադրել նաև պարեն, վիրակապական միջոցներ, յերկու պոստերի միջև հեռախոսաթել անցկացնելու համար անհրաժեշտ յերկաթալար և այլն:

Բեռնակիր շան ուսուցումն արդեն կապի համար մարգված շան ուսուցման շարունակությունն է. այս դեպքում հարկավոր է միայն շանը վարժեցնել մեջքին ծանրություն կրելու կամ լծվելու: Այս ուսուցումը զգուշությամբ և աստիճանաբար է կատարվում: Սկզբում շանը սովորեցնում են դատարկ բեռ տանել, հետո աստիճանաբար ավելացնում են ծանրությունը. այսպիսով, շունը հետզհետե ավելի ու ավելի յերկար տարածություն է անցնում և ավելի շատ ծանրություն է կրում, վորից հետո սկսում են նրան սովորեցնել ուրիշ շան հետ զույգ գնալու: Գնդացիքներ, փամփուշտներ և այլ ծանրությունների քաշելու նպատակով շանը լծելու համար, իհարկե, հատուկ լծասարք և սայլեր են պահանջվում: Առաջին չրջանում՝ սովորեցրած շունը լծված գնում է մարդիչի ցուցումներով, նրա հետ կողք-կողքի, հետո մենակ, և սպա ծանրությունն աստիճանաբար ավելացվում է: Շունը վարժվում է հետզհետե ավելի մեծ տարածությունների անցնելու և ավելի մեծ ծանրություն կրելու և այլն: Ուսուցումը վերջանում է այն ժամանակ, յերբ շունը՝ լծած ծանրությունների քաշելու վարժվե-

շուրջ հետո սկսում ե ինքնուրույն կերպով պոս-
տերը գնալ:



Սիրիայի լաշկանները լծած
Շանը կաթելի յե վարժեցնել նաե հեռա-

խոսալին մալուխը բանալուն (յեստ տալուն), սակայն դրա համար ևս անհրաժեշտ են հատուկ կոճեր, վորոնք թեթեւ լինեն, լայն ստեն ու մնան շան մեջքին և առնվազն մեկ կիլոմետր լար տեղավորեն իրենց մեջ: Այս դեպքում շունը՝ սովորում է բացվող մալուխի ձայնին, գետնին մնացած մալուխի չփումներին և կասեցումներին, վորոնք նրանից վորոշ ջանք ու տշխատանք են պահանջում:

ՊԱՀԱԿԱՅԻՆ (КАРАУЛЬНАЯ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Պահեստները, ռազմական միջոցները, հայթաղթման բաժինները պահպանող մարդկանց թիվը իսողաղ ժամանակ ևս մեծ է, իսկ պատերազմի ժամանակ ավելանում և հրակայական չափերի յի հասնում:

Ռազմական շներին պահակային ծառայության համար ոգտագործելը հնարավորություն է տալիս զգալի չափով պակասեցնելու այդ ծառայությունը, շնորհիվ այն հանգամանքի, վոր շունը բնականից լայն պահպան է:

Պահակային ծառայություն կատարելու համար պետք է շանը հատկապես սովորեցնել: Ամեն մի ուժեղ, չար և զգալի շուն պահակային գործառնի հանձնվելուց և այդ մասի մարդկանց ծանոթանալուց ու վորոշ չափով մարդկելուց հետո լայն պահակային շուն կը դառնա: Սակայն պետք է ասել, վոր շան պահակային ծառայությունը յերբեք չպետք է շը-

փոթել պահպանական (сторожевая) ծառայության հետ, վորովհետև պահակային ծառայության մեջ հաջոցը թույլ է տրվում և նույնիսկ անհրաժեշտ է, իսկ պահպանական ծառայության մեջ, ընդհակառակը, պահանջվում է բացարձակ լուրջություն, իսկ հաջոցն արհեստական կերպով խափանվում է:

Պահակային շան մեջ պետք է զարգացնել.
1. չարություն և անվստահություն դեպի կողմնակի մարդիկ, 2. վստահություն դեպի իբր ուժերը, դանազան ձայների փոխադարձ կապի ըմբռնողություն՝ անախորժության ներգզացումով, 3. զգուշություն ցերեկը և գիշերը:

Վորպեսզի վոչ վոք չկարողանա պահակային շանն ուտելիքով գրավել կամ թունավորել, պետք է նրան սովորեցնել գետնից և կողմնակի մարդու ձեռքից բան չվերցնել:

Պահակային ծառայության վարժված շանը հեշտությամբ կարելի չէ վարժեցնել նաև ուղեկցորդային ծառայության:

ՈՒՆԿՑՈՒՐԿԱՅԻՆ (КОМВОЙНАЯ) ՄԱՍԼ-ՑՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի ժամանակ թե թիկունքում և թե ճակատում մեծ թվով մարդիկ զբաղվում են ռազմագերիներին, կալանավորներին, գասալիքներին ուղեկցելու գործով: Այս դեպքում շունը կարող է ոգնել ուղեկցորդներին իրենց պաքտկանություններն ավելի հաջողու-

թյամբ կատարելու, Շեռապնդելով և բռնելով
փախչողներին:

Ուղեկցորդային ծառայութեան համար
պահանջվում է շատ լավ հոտառություն
ունեցող, փախչողին հետապնդելու ընդու-
նակ և ուժեղ շուն, վոր կարողանա հաղթա-
հարել մարդուն և պահել մինչև ուղեկցորդի
հասնելը:

Ուղեկցորդային շան մարզումը թեև ա-
վելի դժվար է, քան պահակային շանը, ու-
կայն ըստ ուսուցման յեղանակների համարյա
նույնն է: Այստեղ ել պետք է շան մեջ չարու-
թյուն և անվստահություն զարգացնել դեպի
ոտար մարդիկ: Բացի դրանից շանը սովորեցնում են անարգել և յեռանդով հետապնդել փախչողին, այլև ուղեկցորդին պաշտպանել, յեթե նրա վրա հարձակվում են:

ՈՒՋՄԱ-ՍԱՆԻՑԱՐԱԿԱՆ ՆԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ցերեկը, բաց դաշտում, կռվից հետո
աշխատող սանիտարի գործը հեշտ է, և շան
ոգնութեան կարիք չի զգացվում: Ուրիշ բան
է, յերբ պետք է վիրավորներին վորոնել խիստ
կտրտված վայրում և այն ել դիչերը: Այս պա-
րագաններում ծանր վիրավորներին գտնելը
դժվար է. անտառները, լեռները, խոր ձորերը
ծածկում են սանիտարների հորիզոնը, և հա-
ճախ վիրավորները տանջալից մահվան են
դատապարտվում: Այս դրությունից խուսա-
փելու և սանիտարների աշխատանքը թեթե-
վացնելու համար ոգտակար է սանիտարական

Նսկաւոնքի տրամադրութեան տակ վարժված
սանիտարական շնոր գնել: Այս շնորը՝ 1. հե-
տախուզում են տվյալ վայրը և վիրավորին
գտնելով՝ նրան իրենց մոտ յեղած պայուսա-



Գերմանական սանիտար շուն

կից վերականգնական նյութեր են տալիս, յեթե վերավորը գիտակից վիճակում ե, 2. սանիտարին իմաց են տալիս գտած վերավորի մասին և նրան տանում են վերավորի մոտ:

Այս անելիքների համեմատ ել ուսգմասանիտարական շների ուսուցումը պետք և կատարել հետևյալ կերպով. —

1. Վարժեցնել վստահությամբ մոտենալու ընկած և նստած մարդկանց. 2. զարգացնել նրանց մեջ մարդ վորոնելու հետաքրքրությունը. 3. վարժեցնել նրանց տեսողությունը, լսողությունը և հոտառությունը վերավորին գտնելու համար. 4. սովորեցնել իմաց տալ և սանիտարին վերավորի մոտ տանել:

Վերավոր գտնելու մասին իմաց տալուն վարժեցնելու համար սկզբում շանը սովորեցնում եյին վերավորի գլխարկը բռնելու, սակայն չուտով այս յեղանակից հր. Խարվեցին, վորովհետև, նախ՝ ամեն վերավորը գլխարկ կարող ե նրա մոտ չլինել, իսկ յերկրորդ, այն դեպքերում, յերբ վերավորի սաղավարտը կոճկած ե լինում, սաղավարտը գլխից հանելիս չունը կարող ե նրան խիստ ցավեր պատճառել, մանավանդ, յեթե նա գլխից ե վերավորված: Հետագայում սկսեցին իմաց տալու հետևյալ յեղանակը կիրառել. վերավոր գտնելուց հետո չունը վերադառնում եր սանիտարի մոտ և սկսում հաջել, վորից և սանիտարն իմանում եր, վոր վերավոր ե գտնված: Սակայն այս յեղանակից ել չուտով պետք և հրաժարվել, վորովհետև վերավորից մինչև սանիտարի մոտ

գալը շունը կարող եր ճանապարհին վորեւ
բանի վրա ուշադրություն դարձնել և մոռա-
նալ, վոր սանիտարի մոտ պետք է հաջել: Ուս-
տի այժմ այսպէս են անում. շան վզկապից
կարճ (10 սանտ.) թելով կախում են թեթե-
կոճղիկ (բրինձել) 10×3 սնտ. մեծությամբ.
վերավոր գտնելիս շունը նստում է նրա մոտ,
սպասում է պահանջվող կես րոպեն, ապա կա-
խած կոճղիկը բերանն առնելով (апортировка)
բերում է սանիտարի մոտ:

Կոճղիկ բերան առնելը շան համար այն
նշաակությունն ունի, վոր նա դրանով իրեն
դրադված է համարում, ուստի և ճանապար-
հին, վերավորից մինչև սանիտարը, վոչ մի
բանի վրա ուշադրություն չի դարձնում:

ՈԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՇՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆԱ- ԿՈՒՄ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԵՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Շներին ռազմական ծառայության համար
ոգտագործելիս ամենից առաջ պետք է վորո-
շել, թե ինչ տեսակ շուն պետք է ընտրել, և
ինչպէս այս կամ այն միեկնույն տեսակ մի
քանի շներից ամենից ավելի համապատասխա-
նին ընտրել:

Տեսակն ընտրելիս պետք է հիշել, վոր
ռազմական շունն ամենից առաջ պետք է պա-
հանջկոտ չլինի կերակրի և գիշերոթի նկատ-
մամբ, պետք է գիմացկուն լինի և արագա-
շարժ, ուրախ, համարձակ, հեշտությամբ ու-
սույցման յենթարկվող, շուտ կապվող (մտեր-



Երգի տիրյեր


մացող), պետք է լավ զարգացած պահպանա-
կան հակումների ունենա և իր բնավորությամբ
կամակոր չլինի: Այս պահանջներին բավա-
րարելու տեսակետից ռազմական նպատակների
համար ամենից ավելի համապատասխան տե-
սակներն են՝ գերմանական գամփուր (ОВЧАРКА)
և երգել-տիրյերը (տես նկարները): Այս տե-
սակի շները հաջողությամբ աշխատում եյին
խմպերիալիստական պատերազմի ժամանակ,

գլխավորապես գերմանական բանակում: Սա-
կայն այս յերկու տեսակն ել գերմանական են,
ուստի մեզանում իՍՀՄ-ում դժվար և նրանից
ոգտվելը, նախ, վորովհետև լավ չներին ինքը
Գերմանիան բաց չի թողնում, այլ կտա միայն
միջակներին, իսկ յերկրորդ՝ արտառահման
գնալու և մեծ թվով չներ բերելու համար խո-
շոր ծախքեր կպահանջվեն: Բացի դրանից,
գերմանական չների մի քանի տեսակները դեռ
բավականաչափ չեն ընտելացել Ռուսաստա-
նին, մեր կլիման նրանց համար նպաստավոր
չէ, ուստի և նրանք թույլ և վատ ձագեր են
ծնում:

Ահա այս պատճառով ել հարկ յեղավ մը-
տածել սեփական ուսական, մեր պայման-
ներին միանգամայն համապատասխան, տո-
կուն չների տեսակ զարգացնելու մասին: Ռու-
սական տեսակներից, ըստ յերևույթին, ամե-
նահամապատասխան չներն են կովկասյան
գամփոր և հյուսիսային լայկան, վորոնք դի-
մացկուն, արագաչարժ են վաղուց ի վեր մի
չարք աշխտանքներ են կատարում. նրանք լավ
պահապաններ են և վորոնող ու շատ լավ լըծ-
վում են: Ծիշտ նույնպիսի հատկություններով
ոժտված են նաև կովկասյան դամփոնները՝ այն
մեծ, ուժեղ ու կատաղի չները, վորոնք գլխա-
վորապես շատ լավ պահապաններ են: Փորձեր
են յեղել ոգտադործելու նաև մեր սովորական
(ДВОРНЯЖКА) չներին: Սակայն այստեղ
պետք է խոսել վոչ այնքան տեսակի, վորքան
առանձին չների մասին, վորովովհետև ողովո-

րական շները մեծ մասամբ ամենաբազմազան
տեսակների և արյունների խառնուրդ են:

Համապատասխան չուն ընտրելու համար
պետք է ծանոթանալ նրա տարիքին, արտաքին
տեսքին, առողջությանը և բնավորությանը:



Գերմանական գամփո

Ռազմական շան ուսուցման համար ամենալավ հասակը պետք է համարել 7 ամիսը. այս հասակում շան բնավորությունը դեռ կազմակերպված չէ, և շունը դեռ զանազան վատ սովորություններ յուրացրած չի լինում. արտաքին տեսքը ևս բավականաչափ վորոշված է լինում, այնպես, վոր արդեն կարելի չէ ասել, թե ինչ տեսակի շուն է: Շան որգանիզմը ևս այդ հասակում արդեն բավականաչափ ամրացած է լինում, այնպես, վոր նրա համար այլևս այնքան վտանգավոր չեն զանազան հիվանդությունները և հատկապես ժանտախտը—շների այդ պատուհասը: Շան դաստիարակությունն այս հասակում դեռ նոր է միայն սկսվում, և նա արագությամբ ընտելանում է մարզիչին ու կապվում է նրա հետ: Մարզումն այս հասակում հեշտ է: Շունը լավ է յենթարկվում և ընդհանրապես արագությամբ յուրացնում է մարզումը:

Արտաքին տեսքը, վորով պարզվում է շան տեսակը, վորոշվում են հատուկ աղյուսակներով, վորոնք կան շնաբուծարաններում և ծանոթ են ամեն մի մարզիչի: Մառայության պիտանի և ընդունակ լինելու համար շունը պետք է զերծ լինի հետևյալ պակասություններից.—


1. Վոսկրի թուլություն, վորից մեջքը փոս է ընկնում.

2. վոտքերի ուսիստ, այսինքն՝ վոտքերի հոդերի ծոում:

3. նստած (իջած) յետք, վոր ցույց է տալիս յետևի վոտքերի թուլությունը.

4. չափազանց նեղ կուրծք, վոր նշան է թուլության.

5. առջևի և յետևի վոտքերի թեք դիրք:



Հիմ տեսակի (տիպի) դորեքուման-պինչեր

Շանը ուղղակիան ծառայության ընդունելու քոլոր դեպքերում, այսինքն՝ պնելիս, հանձնելիս և փոխադրելիս ընդունակությունը պետք է կատարվի անասնաբուժի և մասնագետների կապով: Շանն ընդունելիս պետք է

հատուկ ուշադրություն դարձնել և նկատի ունենալ՝

1. Շան ընդհանուր տեսքը (վատառողջ շունը մեծ մասամբ հիվանդագին—ճնշված տեսք է ունենում) .

2. բարեխառնությունը ($28-39^{\circ}/_{0}$) . յեթե շերմաչափ չկա, ապա պետք է քիթը շոշափել . յեթե քիթը չոր է և տաք, ապա նշանակում է, շունը հիվանդ է (մոտավոր վորոշում) :

3. Աչքերը յեթե խառնած են, կամ ընդհակառակը, առանձնապես փայլում են, ապա շունը հիվանդ է :

4. կաշու դրությունը (թեփը, քոսը, խոջը և կաշու թարախապատ տեղերը նշան են կաշու հիվանդության) .

5. Ընդհանուր դիրությունը (униатн.)

Շարժուն, կենսուրախ և համարձակ բնավորությունը :

Ձեռք բերված շունն անմիջապես բուժարան, աշխնքն մյուս շների մոտ չի ընդունվում, այլ կարանտինի յե յենթարկվում առնվազն 3 շաբաթ :

Շան բնավորությունը հակայական նշանակություն ունի. ընդհանրապես շան ուրախ ու աշխուժ բնավորությունը կարելի յե նկատել դեպի տերը ցույց տրված վերաբերմունքից . թուլությունն ու վախկոտութունն անմիջապես նկատվում են : Այդ վորոշելու ամենալավ միջոցը նրա ձեռքից վոսկրը կամ կերակուրը խրելու փորձն է . թույլ, վախկոտ շունը

հաշտվում և դրա հետ, իսկ ուրախ, աշխուժ և
ստույգ շունը զիջում և միայն ուժին:

ԻՆՉՊԵՍ ԲԱԶՄԱՑՆԵԼ ՅԵՎ ՊԱՅԵԼ ԾՆԵՐԻՆ

Լավ կազմակերպված բուժարաններում
չներին բազմացնելիս առաջին տեղն և բռնում
արտադրողների ընտրանքը: Շան զուգավորու-
թյունից առաջ մարդիչը պետք և ընտրի հա-
մապատասխան վորձ-արտադրող: Այս ընտ-
րանքը այն հաշվով և կատարվում, վորպեսզի
եզի թերությունները հավասարակշռվեն վորձի
նույն կարգի առավելություններով:

Լավ և կանոնավոր կազմակերպված բու-
ժարաններում պահվում են չների ցեղադրու-
թյան հատուկ մատյաններ, վորոնց ողնու-
թյամբ միշտ, ամեն ուզած բուժելին կարելի չե
իմանալ յուրաքանչյուր շան, ինչպես նաև նրա
ծնողների ու նախահայրերի առավելություն-
ներն ու թերությունները: Յերբեմն այդ ցե-
ղադրությունները հասնում են հեռավոր ազ-
գակցության 8-10-րդ սերնդին:

Եզը 8 ամսական դառնալուց հետո առա-
ջին անգամ սկսվում և «հոսը». սկզբում ար-
յուն, իսկ հետո լորձունք և հոսում. առաջին
հոսումը նշան և, վոր շունը արբունքի չե հա-
սել, այսինքն՝ կարող և հղիանալ: Այդպիսի
«հոսեր» տարեկան լինում են 2 անգամ, սովո-
րաբար գարնանը և աշնանը: Շունը պետք և
զուգավորվի միայն այդ «հոսի» ժամանակ
կամ ավելի ճիշտ՝ հոսը վերջանալուց հետո:
Զուգավորման ամենալավ ժամանակը դա-

բունն և, վորովհետև այդ դեպքում ձագերը ամառն են ծնվում և տաք յեղանակին, բայց ողում ամրապնդում են իրենց որդանիքը:

Բեղմնավորման համար բավական է մեկ զուգավորություն, սակայն սովորաբար յերկու անգամ են կատարում առավոտյան և յերեկոյան: Շան զուգավորությունը կատարվում է մինչև 8-9 տարեկան հասակը, վորից հետո ծնունդը վտանգավոր է, և թույլ ձագեր են ծնվում: Առաջին «հոսը», վոր տեղի յեռնենում 7-8 ամսական հասակում, սովորաբար բայ են թողնում, վորովհետև այդ ժամանակ եզը դեռևս բոլորովին ֆիզիքապես ձևակերպված չի լինում:

Զուգավորման ժամանակ եզի և վորձի սեռական օրգանների առանձնահատուկ կազմության պատճառով նրանք «կցվում են», ապա միմյանցից չպոկվելով՝ զանազան կողմեր են գնում, այդ վիճակում մնալով մոտ 20 բույե, վորից հետո սեռական օրգանները թուլանում են, և շները բաժանվում են: Այդ ժամանակ շներին բաժանել, այս և այն կողմը քաշել չի կարելի, քանի վոր միևնույն է, նրանք չեն կարող բաժանվել, իսկ ուժով քաշելը կարող է եզի կամ վորձի կորստյան պատճառ լինել:

Զուգավորությունից 62-63 օր հետո սգը ձագեր է բերում: Դրանից մի շաբաթ առաջ եզին պետք է թողնել առանձին շենքում, տալով հարդով լցված մի լայն արկղ: Հղության ժամանակ եզը պետք է չատ ման դա և անդա-

բար կերակուր ստանա: Ձագերի թիվը լինում է 1-12, սակայն շան տակ 4-5 հատից ավելի թողնել պետք չէ, վորովհետև նա չի կարող բոլորին կուշտ կերակրել, և ձագերը թույլ կլինեն: Ծնելիս ավելի լավ է եզին չխանգարել, թողնելով նրան մի հանգիստ ու կիսամութ տեղում: Ձագերը ծնվելիս եզերն իրենք են նրանց խնամում, կրծելով կտրում են պորտը և հրելով ու մոտեցնելով իրենց պտուկներին՝ սովորեցնում են ծծելու:

Իսկ յերբ պետք է բոլոր ձագերին թողնել շան տակ, ապա լավ է նախորոք «ստնտու» գտնել, որինակ՝ մի սովորական շուն գտնել, նրա ձագերին աննկատելի կերպով վոչնչացնել և նրանց տեղ դնել նոր, ազնվացեղ ձագերին:

Կերակրող եգի/սնունդը պետք է լավացնել, տալով նաև վորոշ քանակությամբ կաթ:

Ձագերը ճնվում են կույր վիճակում, և 10-14 որից հետո նրանց աչքերը բացվում են: Ձագերին մոր մոտ պետք է թողնել մինչև 6 շաբաթ, վորից հետո նրանց թույլ կաթնապուր պետք է տալ. ձագերին պետք է կերակրել որական 6-7 անգամ:

Մեծահասակ շներին կերակրում են որական 2 անգամ, իսկ ձագերին՝ նալած հասակին. վորքան ձագը փոքր է, այնքան ավելի շուտ-շուտ պետք է կերակրել նրան որվա ընթացքում: Այս անհրաժեշտ է, վորպեսզի ձագի որգտնիզմը լավ մարսի և յուրացնի կերակուրը. «լավ է քիչ, քայց հաճախ», — տե՛ս կե-

ըսկրման գլխավոր կանոնը: Շանկալի յե ձա-
գերին արվող կերակրի մեջ մի պաղունց ֆոս-
ֆորաթթվային կիր խառնել, վորպեսզի ձա-
գերի վոսկրներն ամրանան:

Ռազմական շներին կերակրելու հիմնա-
կան պայմանը կերակրի պարզությունն է.
գործադրվող մթերքները պետք է մոտենան
զինվորական մասի համար ընդհանրապես
յեւթվող կերակրին: Զպետք է շանը միատե-
սակ կերակուր տալ, վորը շատ ձանձրացնում
է, և շունը դադարում է ուտելուց: Շարաթը
մեկ անգամ լավ է միայն բուսական կերակուր
տալ: Ամենից լավն այն կերակուրն է, վոր
նման է թանձր տաք (վոչ-շատ) սոււյի՝ մանր
կոտորած մսի հետ: Ամանները պետք է համա-
րակալված լինեն և ամեն մեկը մի շան հաս-
կացված լինի. կերակրելուց հետո մնացորդը
չպետք է թողնել ամանի մեջ, վորպեսզի չը-
թթվի: Մարդիչը պետք է հետևի, թե ինչպես
և ինչքան է ուտում իր շունը: Կերակրելուց հե-
տո շանը դուրս պետք է տանել գրոսնելու հս-
մար: Զրի ամանները կարելի չէ թողնել վան-
դակներում:

Մեծահասակ շարքային շանը որական
պետք է տալ մոտավորապես՝ 72 մսխ. ձաւար,
1-1½ ֆունտ միս (չհաշված վոսկրները), 5 մս.
աղ, 48 մսխ. հաց (նորման մատնանշված է
յերկու նվազի համար—առավոտյան և յերե-
կոյան):

Հիվանդ, հղի և ձագերին կերակրող շնե-
րի կերակրի չափը վորոշում է բժիշկը:

Շան խնամքը ևս մեծ ուշադրութեամբ և պահանջում. պետք պիտիատել ամեն բան իր ժամանակին կատարել: Սովորաբար բուծարաններում ախպիսի որակարդ և սահմանվում.—

7-8՝ վանդակների մաքրում և շների զբոսանք, 8-10՝ պարապմունք շների հետ դաշտում, վայրում (մարզանք), 10-10¹/₂ շների կերակրում, 10¹/₂-12՝ մարզիչների պարապմունքը, 12-15՝ ճաշ և հանգիստ, 15-17՝ վարժական, դասարանային պարապմունքներ, վոր կատարում են մարզիչները և դեկավարը. 17-18¹/₂՝ պարապմունքներ շան հետ վայրերում, 18¹/₂-19¹/₂՝ շների կերակրում և զրոսանք, 19¹/₂-20՝ մարզիչի ընթերցը:

Շան կացարանը մաքրելիս, մարզիչը ամեն որ նայում և շան կղկղանքը՝ վորդեր գրտնեյու համար և անհրաժեշտութեան դեպքում փոխում և տակի հարդը: Շարաթը մեկ անգամ տաք լուծույթով լվացվում, ախտահանվում և շան վանդակը: Ամեն որ շան մազերը սանրում են և նայում նրա ճանկերն ու թաթերը: Յեթե հիվանդութեան նշաններ են նկատվում, շանը իսկույն տանում են անտանարուժի կամ բուժակի մոտ:

Յեթե վանդակները բավականաչափ ընդարձակ են, կարելի յե նրանց մեջ տեղավորել յերկուական շուն (յեթե չեն կռվում միմյանց հետ): Որվա մեծ մասը շները պետք և բացողյա և շարժման մեջ անցկացնեն, վորպեսզի վարժվեն յերթի պայմաններին: Զազերի հա-

մար լավ է շինել առանձին փոքրիկ բակ, վորտեղ նրանք ամբողջ որը խաղում են:

Անհրաժեշտ է հետեւել, վորպեսզի շունը չգիրանա, յեթե գիրացումը նկատելի չէ, պետք է պակասեցնել կերակուրը և ուժեղացնել պարտադմունքները, մեծ տնցումներ կատարելով:

Զգուշացե՛ք ձեր շանը քշքշացնելուց, սովորեցրե՛ք նրան ամեն տեսակ բարեխառնության և յեղանակի, ամրացրե՛ք նրա որգանիլմը, այլապես ռազմական շունը կդառնա սենյակի շուն և Ֆրոնտի իրական պարտադաներում կհրաժարվի աշխատելուց:

Պահպանի՛ր շանը և հոգ տար նրա առողջության մասին այնպես, ինչպես հեծելակը պահում է իր ձիուն:

ՀԻՎԱՆԴ ՇՈՒՆ

Շան հիվանդ լինելու գլխավոր նշաններն են՝ 1) տաքությունը, այսինքն՝ բարեխառնության բարձրացումը (նորմալը—38-3, 38,8), 2) կենսուերախության անհետացումը, թուլությունը, պոչը կծկելը և յերերուն քայլվածքը, 3) աչքերի աղոտությունը կամ առանձնապես տենդային փայլը, 4) կերակրից հրաժարվելը, 5) գրմռոցը, 6) ստամոքսի խանգարումը, 7) փսխումը, 8) տաք և չոր քիթը, 9) պառկած մնալը և բաց ող դուրս գալուց հրաժարվելը, 10) բերանի վատ հոտը, 11) աչքերից ու քից հոսող թարախը:

Փորձված, շանը խնամող կտմ մարդող

մարդը շան ընդհանուր տեսքից իտկույն կնկատի, վոր նա հիվանդ է, իսկ յերբ շունը հիվանդ է, պետք է անմիջապես բժշկի դիմել, նկարագրելով այն ամենը, ինչ վոր նկատելի լի է:

Դեղերն ընդհանրապես արվում են կամ վորպես փոշի կամ հեղուկ դրությամբ. իհարկե, շունը ինքնակամ դեղ չի ընդունում, ուստի պետք է ձախ ձեռքով քերանը բանալ և աջ ձեռքով լցնել դեղը, յեթե փոշի չէ, պետք է լցնել շան լեզվի վրա և վոչ թե կոկորդը:

Կանոնավոր խնամքի դեպքում արդեն հաճախ շունը առողջանում է, մանավանդ յեթե նա ժանտախտով է հիվանդ: Թե ինչպես պետք է շանը խնամել, այդ կասի բժիշկը, սակայն շանը սիրող մարդը ինքը կգտնի նրան խնամելու յեղանակը: Յեթե այդ խնամքը հանձն առած մարդը աշխատանքը իր համար մի տխուր պարտականություն կհամարի, ապա նա, իհարկե, շանը ոգուտ չի տա: Մնամքը լավ է այն ժամանակ, յերբ այդ խնամքի պայմանները ևս լավ են: Լավ խնամքի առաջին պայմանը շենքն է, վորը պետք է լինի լուսավոր, չոր, տաք և լավ պետք է հողմահարվի: Յերկրորդ պայմանը կերակուրն է, վորը պետք է ստամոքսը չծանրաբեռնի և միատեսակ չլինի: Ընդհանրապես, յեթե բժիշկը շանը քննել է, ապա նա կորոշի, թե ինչով պետք է կերակրել նրան: Լավ է շանը կերակրել կաթով, կաթնովով և ձկով: Բուժարաններում հիվանդ շներին կերակրում են հատուկ ցուցակի համաձայն:

Շների ամենատարածված հիվանդություններն են՝ եկղեման, քոսը, կապը, լուծը, վորդերը, ռախիտը և ժանտախտը:

Մի քանի հիվանդություններ առաջ են գալիս բրդի և կաշու կեղտոտությունից, վանդակը և ընդհանրապես կացարանն անուշադրության մատնելուց, հարդե ներքնարկը ուշուշ փոխելուց, ընդհանուր խոնավությունից և այլն, ինչպես նաև ուրիշ շներից վարակվելուց:

Այդ հիվանդություններից պահպանելն ու ապահովելը դժվար չէ. պետք է կացարանը չոր պահել, հաճախ շներին լվանալ կրեոլինի լուծույթով, հաճախ փոխել շենքի ողը, հիվանդ շներին առողջներից հեռու պահել և ուշադրությամբ խնամել:

Շների մեծ մասը վորդերի հիվանդություն է ունենում. դրանք մի տեսակ ճիճուներ են, վորոնք բազմանում են շատ կենդանիների ու մարդու ստամոքսում և աղիքներում: Շան վորդերը մինչև 100 դանադան տեսակներ են ունենում, նրանք շանը սաստիկ հյուծում, թուլացնում և ուժաստատ են անում: Այս հիվանդությունը թեթև է լինում, սակայն յերթեմն կորստյան պատճառ է դառնում: Պետք է առանձնապես բժշկել այդ հիվանդությունից տառապող շներին և առանձնացնել, անջատել մյուսներից, վորովհետև վորդային հիվանդությունները շատ վարակիչ են:

Բաժական հաճախ ձագերը ռախիտ են ունենում: Ռախիտը—վոսկրների թուլությունն

ե, վորից վտաքերը ծովում են, և մեջքը փոս
ե ընկնում, շունը շարքից դուրս ե գալիս և
դառնում հաշմանդամ: Ռախիտը սկսվում ե
այն ժամանակ, յերբ կատարվում ե որդանիդ-
մի ընդհանուր զարգացման պրոցեսը: Այս
հիվանդությունն առաջանում ե վատ սննդից,
չարժման պակասությունից և վատ ու խոնավ
չենքից: Առանձնապես հաճախ ռախիտով հի-
վանդանում են այն ձագերը, վորոնք ձմեռն են
մեծանում:

Շների ամենասարսափելի և ամենատա-
րածված հիվանդությունը ժանտախտն ե, վո-
րով հիվանդանում են համարյա բոլոր շները:
Շներից վոմանք այդ հիվանդությունը կրում
են վոտքի վրա, հեշտությամբ, վոմանք ել
սատկում են: Այս հիվանդությունը չի բժըշկ-
վում, վորովհետև նրա պատճառները դեռ չեն
գտնված: Վորջան շունը ամրակազմ ե ու կոփ-
ված, այնքան նա հեշտությամբ ե դիմանում
ժանտախտին:

Ժանտախտով հիվանդանալու դեպքում
մեծ նշանակություն ունի շան հասակը. ա-
ռանձնապես մեծ չափերով վոչնչանում են
(մինչև 15 տոկոսը) 2-3 ամսական ձագերը,
համեմատաբար քիչ՝ մի տարեկանները: Բու-
ծարաններում, վորտեղ մեծ թվով շներ են
կուտակված լինում, ժանտախտը մեծ ավերա-
ծություններ ե գործում, գլխավորապես ըս-
կավելով գարնանը: Իհարկե, ժանտախտով
հիվանդացած շունը պետք ե անմիջապես ա-
ռանձնացվի: Շրջապատողների և հատկապես

մարդու համար ել ավելի վտանգավորը շան կատաղածությունն է, վոր վարակիչ է և անցնում է թքի միջոցով: Կատաղած շան կծած մարդը մեռնում է տանջալից մահով: Ուստի բուժարաններում պետք է առանձնապես հետեւել, վորպեսզի թափառական շները մուտք չգործեն այնտեղ: Կատաղության առաջին նշաններն են՝ պղտոր հայացքը, թուքը, վոր սովորաբար առատությամբ հոսում է բերանից, ախորժակի բացակայությունը, ջղաձգությունները և այլն: Յեթե կատաղության նշաններ են նկատվում, և յեթե շունը կծում է, ապա պետք է 1. ալդպիսի շանը սպանել և գլուխը կտրելով՝ ուղարկել Մոսկվայում գրտնված պաստերյան ինստիտուտներից մեկը՝ հետազոտության համար, 2. առանձին շներում փակել կծած շներին. 3. յեթե կատաղած շունը մարդ է կծել, պետք է անհապաղ հատուկ սրսկումներ անել, վորը կատարում են ԽՍՀՄ բոլոր խոշոր քաղաքներում:

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԾԵՆԸ

Շանը սովորեցնելը, այսինքն՝ մարզելը (дрессировка) դժվար գործ է, վորը մեծ ուշադրություն, համբերություն և գործի սեր է պահանջում, վորի համար պետք է շան բնական հակումներին ծանոթ լինել: Այս պատճառով ել մարզելու բոլոր յեղանակները մի փոքրիկ գրքուկում նկարագրել չի կարելի, սակայն պետք էլ չե, վոր ամեն մի կարմիր բանակային ալդ բոլորն իմանա: Այն կարմիր

բանակայինը, վոր ինքը սաղմական շների
բաղմացմամբ չի դբաղվում, բուծարանում չի
ծառայում, սակայն, վորը պատերազմում
կամ զորաշարժերի ժամանակ գուցե կարիք
կունենա շան ոգնությանը գիմելու, համենայն
դեպս պետք է իմանա, նախ, թե ինչպես պետք
է վարվել իր շորքոտանի ոգնականի հետ, իսկ
յերկրորդ՝ պետք է զաղափար ունենա այս գի-
տության գլխավոր հիմունքների մասին:

Ամեն մի ուսուցիչ լավ է միայն այն ժա-
մանակ, յերբ աշակերտը նրան հասկանում է.
հասկանալի լինելու համար ուսուցիչը պետք է
իր բացատրությունները հարմարեցնի իր ա-
շակերտների ընդունակություններին ու հաս-
կացողություններին: Այս է որենքը մարդու և
առավել ևս շան նկատմամբ: Մարդիչը ամենից
շատ պետք է այն բանից վախենա, վոր իր պա-
հանջները կարող են շան համար հասկանալի
չլինել. այս տեղի կունենա այն ժամանակ,
յերբ նա շնից՝ նրա ըմբռնելու կարողությունից
վեր բան կպահանջի: Թե յերեխան և թե շունը
համարյա նույն կանոնների հիման վրա յեն
սովորում: Այսպես՝ յերեխային ցույց են տա-
լիս, որինակ, մատիտը և միաժամանակ ասում
են «մատիտ». այս կրկնվում է մի քանի ան-
գամ, ուստի և «մատիտ» բառի ձայնը և մա-
տիտի տեսքը հիշողության մեջ ամուր կերպով
կապվում են միմյանց հետ: Յերեխան իմա-
նում է, թե ինչ է նշանակում «մատիտ» բառը:
Ճիշտ նույնն էլ շունն է: Յեթե սովորեցնում
են, որինակ, նստելը, մարդիչը ձեռքով սեպ-

մում և շան մեջքի հետևի մասը և արտասա-
նում և «նստել» բառը. այս վարժությունը
կրկնելուց հետո հետզհետե շան հիշողության
մեջ ձեռքով սեղմելը և տված հրամանը կապ-
վում են միմյանց հետ, շունն սկսում և հասկա-
նալ, վոր «նստել» ձայնը նշանակում և նստել.
ուժեղ կերպով սեղմելու վարժություններէց
հետո շունը սովորում և առանց այլևայլու-
թյան կատարել այդ հրամանը:

Այսպիսով, շանը մի բան անելուն վար-
ժեցնելու համար պետք և ամենից առաջ վորևէ
ձևով նրան ոտիպել կատարելու պահանջնող
գործողությունը և այդ կատարումը կապել
հրամանի կամ շարժման (ցուցիչով) հետ:
Հրամանի և գործողության այդ կապը մի
քանի անգամ կրկնվելուց հետո (նայած շան
հիշողությանը), ամբանում և շան հիշողու-
թյան մեջ, և շունն սկսում և այդ վարժու-
թյունը իմանալ: Ահա այս հիմունքներով եւ
կատարվում և թե յերեխայի և թե շան ամեն
մի ուսուցում: Մակայն շան և մարդու ուսուց-
ման տարբերությունն այն և, վոր մարդը կա-
րող և խոսել, կարող և զարգանալ ուրիշների
հետ շփվելով և ուրիշներին նայելով՝ կարող և
լսել ու հասկանալ այն, ինչ յերեք չի տեսել
ու լսել: Շունն այդ չի կարող անել. նրա մտա-
վոր ընդունակությունը մարդու համեմատու-
թյամբ շատ ցած է. նա չի կարող խոսել, չի
կարող կոլեկտիվորեն զարգանալ. իսկ այս
նշանակում և, վոր յուրաքանչյուր շան պետք
և առանձին սովորեցնել: Նա չի կարող լայն

չափերով կշռադատել, վերլուծել իր ստացած դիտելիքները, նա չի կարող դատել չտեսած առարկաների մասին։ Շուներ կարող ե իմանալ միայն այն, ինչ տեսել կամ փորձել ե իր կյանքում։ Այսպես, որինակ, շուներ կարող ե իմանալ, վոր դուռն մյուս կողմում բակ կա՝ միայն այն ժամանակ, յեթե դեթ մի անգամ այդ դռնով անցնի։ Նա կարող ե իմանալ ե հասկանալ ճաշի դանդը, քանի վոր նա վաղուց իմացել ու հիշողության մեջ պահել ե, վոր գանգից հետո իսկույն սկսում են ուտել։ Եսկայն շուներ յերբեք չի կարող հասկանալ տոմս գնելու ե գնացք նստելու փոխադարձ կապը, այդ նրա ըմբռնողությունից վեր ե։ Սակայն վորոչ գաղափարների ե գործողությունների միջև շան համար առաջացած կապը ես կարող ե իր քաղաքական կողմերն ունենալ։

Եստ հաճախ միեւնույն պայմաններում, միեւնույն վայրում դրադվելով՝ շունն իր աշխատանքը կապում ե չքաղաքացու պարագաների հետ։ Որինակ՝ կապի ծառայության վարժությունների ժամանակ անփութ մարգիչը շանը շարունակ ուղարկում ե ճանապարհով, փոխանակ տարրեր վայրերով ուղարկելու։ Վերջիվերջո շան համար սովորություն ե դառնում միայն ճանապարհների վրա աշխատել։ Իսկ դրա հետեանքն այն կարող ե լինել, վոր հետո շունը ճանապարհ տեսնելով, կարող ե դուրս գալ դաշտից, վորով նրան ուղարկել եյին, ե գնալ առաջին իսկ հանդիպած ճանապարհով ե կորցնել ուղղությունը։

Միայն զբաղմունքների վայրը շարունակ
փոփոխելով, ուսուցման յեղանակներն ու բո-
լոր պայմանները փոփոխելով կարելի չէ լիա-
կատար հաջողություն ունենալ և խուսափել
վոչ-ցանկալի սովորություններից:

Մարդու վրա միշտ ել, այսպես թե այն-
պես, ազդում են արտաքին աշխարհի յերե-
վույթները, ինչպես՝ փողոցի աղմուկը,
մարդկանց շարժումը և այլն. այդ կողմնակի
յերևույթները հաճախ նրան թույլ չեն տալիս
իր մտքերը կենտրոնացնել, խանգարում են
նրա աշխատանքը և այլն: Նույն բանը պատա-
հում է նաև կենդանիներին, հատկապես շանը:
Ուստի պարապմունքների առաջին շրջանում,
յերբ շան մեջ դեռ նոր է զարգանում կարգա-
պահությունը և լսելու-յենթարկվելու գի-
տակցությունը, պարապմունքները պետք է
սեղի ունենան վորևէ կողմնակի յերևույթից
հեռու տեղում, վորպեսզի շան ուշադրությու-
նը չչեղվի իր անմիջական աշխատանքից: Ընդ-
հակառակը, յերբ մարդիչի և շան մեջ փոխա-
դարձ կապն արդեն հաստատված է, և շունն
սկսում է կատարել այն, ինչ վոր նրանից պա-
հանջում են, այդ ժամանակ պետք է սկսել
դիտափորյալ կերպով այդպիսի կողմնակի յե-
րևույթներ առաջ բերել և հետզհետե ուժե-
ղացնել: Այս հատկապես կարևոր է ռազմական
շների ուսուցման գործում, վորոնք հետագա-
յում աշխատելու յեն ուժեղ կողմնակի յերե-
վույթների պայմաններում, ինչպիսին են գո-
րամուտերի շարժումը, լուսարձակի աշխա-

տառնքը և աշլմ: Ուստի ամբողջ ուսուցումը պետք է կատարվի այնպիսի կողմնակի յերեւելու թների պայմաններում, վորոնք նման լինեն իսկական կռվի պայմաններին:

Իհարկէ, ամեն շուն սիրով ու հոգարութամբ և միշտ չի զբաղվի, մանավանդ առաջին շրջանում, ուստի հարց է ծագում, թե ինչպես ստիպել շանը պարսպելու:

Հարկադրանքի

հարցը մարզելու գործում համարյա գլխավոր տեղն է բռնում. հարկադրանքն այն է, վոր շանը ներշնչում են հետեյալ գիտակցութիւնը. «քեզ համար հաճելի չէ կատարել այն, ինչ վոր պահանջվում է... սակայն իեթի դու այդ շանես, այդ դեպքում ել ավելի մեծ անախորժութիւն կլինի...»:



«Խիտու» վզկապ

Հարկադրանքի հարցը մարզելու գործում համարյա գլխավոր տեղն է բռնում. հարկադրանքն այն է, վոր շանը ներշնչում են հետեյալ գիտակցութիւնը. «քեզ համար հաճե-

լի չէ կատարել այն, ինչ վոր պահանջվում ե... սակայն յեթե դու այդ չանես, այդ դեպքում ե՛լ ավելի մեծ անախորժություն կլինի...»:

Շունը չի ուզում մարդու կողքից, վորքի մոտից գնալ, նա ուզում ե վազվզել, խաղալ, վորքի մոտից գնալը նրա համար այդ ժամին հաճելի չէ. սակայն նրա անկանջի վերեւից հըն- չում ե «կողքի՛ց» հրամանը, վորը արտասան- վում ե սպառնական տոնով, իսկ շանն ել ա- ռաջ են մղում ե՛լ ավելի մեծ անախորժու- թյամբ, այսինքն՝ կամ մորակի ե կամ ճի- պոտի թեթե հարվածով կամ խիստ վզկապի պարանը թեթե կերպով թափ տալով (խիստ վզկապը բռն լիչեր ունի): Ընդհանրապես, յերբ շունը վորքերի մոտից, կողքից ե գնում, մարդիչը նրա հետ խոսում ե փաղաքական տոնով, չոյում ե նրան ե խրախուսում ե (ու- տելու վորեւ բան տալով): Այս դեպքերը մի քանի անգամ կրկնելուց հետո շունն այն տալ- վորությունն ե ստանում, վոր վորքերի մո- տից գնալը նրա համար անախորժելի դրություն ե ստեղծում, ե, ընդհանրապես, առաջ ընկնելը խիստ անախորժություն ե պատճառում. ուս- տի, անխուսափելի անախորժությունից ա- դատվելու համար ավելի լավ ե յենթարկվել ե կողքից չհեռանալ: Ահա հարկադրանքի ե պատժի նպատակը, վորին կարելի յե հասնել զանազան յեղանակներով: Սակայն յերբեք չի կարելի իզուր տեղը շանը հարկադրել, մանա- վանդ վրիժառության հաճար, կամ տիրոջ

Ղլա յնության, դյուարորբոք բնավորության հետեանքով:

Վրիժառությունն ու ծեծը չեն կարող տեղի ունենալ. պետք է կիրարկել հարկադրանքի չոր և մտածված միջոցներ, վորոնք անմիջապես պետք է փոխարինվեն փաղաքշանքով, յերբ չունը կատարում է տված հրամանը:

Փաղաքշանքն ու խրախուսանքը միշտ պետք է դործադրվեն, յեթե չունը կատարում է պահանջվող դործողությունը. փաղաքշանքն ե՛լ ավելի յե ներշնչում չանն այն միտքը, թե պահանջված դործողությունը կատարելն անհրաժեշտ է ու շահավետ:

ՄԱՐԶԻՉԸ ՅԵՎ ՇՈՒՆԸ

Անհորձ մարդիչների գլխավոր և հաճախակի սխալներից մեկն այն է, վոր նրանք «մարդկայնացնում» են շան մտավոր կարողությունները, նրա համար անհասկանալի, հետեապես և նրա ուժերից վեր պահանջներ են անում, մտածելով, թե նա կհասկանա այդ պահանջները և «իր խելքով կըմբռնի»: Մյուս, նույնպես հաճախ տեղի ունեցող սխալներն են. —

1. Մարդիչի տոնի անվճռականությունը,
2. դասի ժամանակ ուսուցման աշխատանքի ու ձևի անհաջող և միատեսակ բաշխումը, վոր ձանձրացնում է շանը և թուլացնում նրա տրամադրությունը,
3. պահանջը կատարելիս չխրախուսելը, և ընդհակառակը, սպառնալիքի ու հարկադրանքի անհաջող կիրարկու-

թյունը հրամանը չկատարելու դեպքում, 4. տվյալ աշխատանքին սովորեցնելու սխալ յեղանակը:

Յերիտասարդ մարզիչները հաճախ մի այլ շատ կարեւոր սխալ են անում. աշխատելով լավագույն արդյունքներ ստանալ այն դեպքերում, յերբ շունը առանց հետաքրքրութեան կամ կիսատ և կատարում պահանջված գործողությունը, մարզիչը հարկադրում և մի անգամ ել կատարելու. հետո նույն արամադրությունը տեսնելով և ցանկանալով այնուամենայնիվ լավագույն կերպով կատարել տալ, սկսում և ջգայնանալ և անվերջ կրկնել և տալիս նույն գործողությունը: Այս հանգամանքը, սակայն, միշտ հակառակ հետեւանքներ և ունենում այն մտքով, վոր շունը քանի-պնում՝ այնքան ավելի վատ և կատարում տվյալ գործողությունը: Այս կոչվում և «պերմարզում», վորից շունը կորցնում և ամեն մի հետաքրքրություն դեպի պահանջվող գործողությունը: Այս սխալն ուղղելը դժվար և և պահանջում և նախ՝ վորոչ ժամանակ պաշտրեցնել անհաջող կատարվող գործողութեան ուսուցումը, իսկ հետո նորից սկսել այն ժամանակ, յերբ շունը կրկին հետաքրքրութեամբ կվերաբերվի դեպի այդ գործողությունը:

Կուպիտ սխալներից պետք և համարել նաև այն, յերբ ճիշտ կերպով չեն վորոշվում սաղմահան շան բնութանակությունները, այսինքն՝ չի պարզվում, թե շունը սաղմական ծառայու-

Թյուն մեջ ամենից տվելի ինչ աշխատանքի
համար և պիտանի:

Մարդիչի և շան փոխարարերու թյուն-
ները պետք և հիմնված լինեն բարության և
բարեխղճության վրա. հենց այս ել շան մեջ
առաջ և բերում վստահություն դեպի մար-
դիչը, առանց վորի աշխատել չի կարելի: Ու-
սուցման գլխավոր կանոնն է՝ գիտությունը—
խաղի միջոցով: Ամբողջ ուսուցումը պետք և
վոչ թե խիստ պատժի սպառնալիքի տակ կա-
տարվի, այլ այնպես, վորպեսզի շունն ինքը
չահագրգռված լինի պահանջված աշխատան-
քը կատարելով: Այնուհետև հաճախակի վար-
ժությունների միջոցով աշխատանքը սովոր-
ական և դառնում և արդեն շան կողմից կա-
տարվում և անարգել: Շան հետ մեղմ, հան-
գիստ և տակտով վարվելը առաջին քայլն է
մերձեցում ստեղծելու համար: Հրամանները
պարզ և վորոշակի ձևով տալը նույնպես մար-
դելու լավ կողմերից մեկն են: Միշտ և ամե-
նուրեք տիրում և բարություն, սակայն, յերբ
շունը ցույց և տալիս իր կամակորությունը և
առհասարակ չարանալով՝ չի կամենում աշ-
խատել, պատկերը խիստ փոխվում է. հրա-
մանները դառնում են անողոր, ձայնը դառ-
նում և սղոլպատի, առանց ամենավորք տա-
տանումների, հնչում են սպառնալիքներ, վո-
րոնք շանը հիշեցնում են անխուսափելի անա-
խորժությունների մասին և այլն: Սակայն,
ահա, սպառնական ձայների ազդեցության
տակ հրամանը կատարված է և նորից հըն-

շուն և մարդիչի փաղաքշող ձայնը, ու նրա
ձեռքը շոյում և շանը:

Վճռական բոպեյին չի կարելի դիջել ու
տատանվել, այլապես շունն ինքը կդառնա
տեր, և ամբողջ աշխատանքը կձախողվի:

Շան հետ աշխատելիս մեծ նշանակություն
ունի մարդիչի համբերությունը. ուսուցման
ժամանակ շունը հեշտությամբ կարող և սր-
խալվել. պահանջվող գործողությունը չկա-
տարելու դեպքում մարդիչը ամենից առաջ
մեղքը իր մեջ պետք և վորոնի, ստուգելով իր
գործողությունները և լավ մտածելով՝ թե
արդյոք իր հրամանները բավականաչափ հաս-
կանալի՞ յե յեղել շան համար:

Կատարումը ուշանալիս չպետք և վո՛չ
ջղայնանալ և վո՛չ ել տաքանալ, այլ պետք և
հանգիստ, համբերությամբ ու վճռականորեն
պահանջը կրկնել. մարդիչի ամեն մի ջղա-
յություն իսկույն հաղորդվում և շանը, ան-
հասկանալի հրամանի տոնը բարձրանալիս
շունը սկսում և չհասկանալ պահանջը, վախ և
զգում անհայտության հանդեպ, և ուսուցման
ամբողջ կարգը խախտվում ու փչանում և:

Ռազմական շան ուսուցումը (որինակ՝
պահպանական ծառայության համար) տևում
է մոտավորապես 10 շաբաթ և բոտ շաբաթ-
ների այսպես և բաշխվում. —

1 շաբաթ. — Ընտելացում մականվանը, կա-
պին և վզկտալին, ծանոթա-
ցում խրախուսանքներին («լավ

ե») և սպառնալիքներին, միասին քայլում, նստեցում, տեղափոխում, ապառ դրություն, մոտ գալ.

2 շարաք. — Նույնը և տեղափոխան (գլխավոր տեղափոխան) ու ընդհանուր կարգապահության դարգացում.

3 շարաք. — Նույնը և սպորտի բովկա, ախինքն՝ զանազան իրեր բերելը. կարգապահության դարգացման պահանջն ավելանում և.

4 շարաք. — Նույնը և ընտելացում հեռավոր արձակյուններին, ուշագիւր լինելու պահանջ՝ սուլիչի միջոցով. շարության դարգացում գեպի կողմնակի մարդը.

5 շարաք. — Պահպանական հակամոների դարգացում (ստանց արտաքին աշխարհի յերևույթներին, վարոնք ուշադրություն ևն հրավիրում իրենց վրա):

6 շարաք. — Նույնը.

7 շարաք. — Նույնը, ուշադրությամբ բազատելու ժամանակը յերկարացնելով.

8 շարաք. — Տեսանելի գրգռումից (կողմնակի մարդու տեսքից) ձայնական գրգռման (միայն նրա քայլերի ձայնին) անցնելը.

9 շաբաթ .—Ձայնական գրգռումները (աղ-
մուկ, խշշոց, քայլեր) թուլա-
նում են և տարածությունն
ավելանում է .

10 շաբաթ .—Գիշերային աշխատանք պահ-
պանական ծառայության պայ-
մաններում, վորոնք մոտենում
են իրականին :

11 շաբաթ .—Նույնը . աշխատանքի հրդ-
կում—նրբացում .

12 շաբաթ .—Նույնը . աշխատանքի հրդ-
կում—նրբացում :

Ծներին կապի ծառայության աշխատան-
քի սովորեցնելու համար պահանջվում է 5-6
ամիս :

Ուսուցման ամբողջ ժամանակամիջոցում
և այնուհետև շան հետ վարյիլիս պետք է հի-
շել հետևյալ հիմնական կանոնները .

Յերբեք թույլ չտալ արգելվածը :

Յերբեք չփոխել տրված հրամանը :

Յերբեք չարգելել այն, ինչ վոր կարելի չէ
թույլ տալ :

Հենց վոր դու շանը հասկանալի դար-
ձար, —ամեն ինչ քո ձեռքին է :

Դու շանը չխաբես, նա յերբեք քեզ չի
խաբի :

Յեթե շունը վորեւե սխալ բան անի, ապա
այդ միայն քո ուսուցման սխալ յեղանակն է
ապացուցում :

Պահպանիր շանը և հող տար նրա առող-
ջության մասին:

Ենից մի պահանջիր անհնարինն ու ան-
հասկանալին:

Ավելի լավ է թերազնահատել շան ընդու-
նակութունները, քան դերազնահատել:


Յեթի շունը այլևս քեզ չի հարգում, ապա
այդ հավասար է ամբողջ գործի ձախողման:

~~~~~



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                     |    |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
|                                                                                                                     | 62 |
| Շան պատմությունը . . . . .                                                                                          | 5  |
| Ինչպես շունն ոգտագործվեց ազմական<br>ծառայության համար . . . . .                                                     | 11 |
| Ինչպես է շունն աշխատում պատերազմում                                                                                 | 16 |
| Պահպանական ծառայություն և հետա-<br>խուզություն . . . . .                                                            | 21 |
| Հաղորդման ծառայություն . . . . .                                                                                    | 27 |
| Բեռնատարական ծառայություն և լծկա-<br>նություն . . . . .                                                             | 33 |
| Պահակային ծառայություն . . . . .                                                                                    | 37 |
| Ուղեկցություն ծառայություն . . . . .                                                                                | 38 |
| Ռազմա-սանիտարական ծառայություն .                                                                                    | 39 |
| Ռազմական շան բնորությունը և բանա-<br>կում ազմական ծառայության հա-<br>մար ոգտագործվող շների տե-<br>սակները . . . . . | 42 |
| Ինչպես բազմացնել և պահել շներին . .                                                                                 | 49 |
| Հիվանդ շուն . . . . .                                                                                               | 54 |
| Ինչպես սովորեցնել շանը . . . . .                                                                                    | 58 |
| Մարզիչը և շունը . . . . .                                                                                           | 65 |




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039234

[144]

ФРБС 15 ч.



В. Языков

**Собаки на Военной  
Службе**